Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թ.
հոկտեմբերի 9-ի նիստի N 42
արձանագրային որոշման

**ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցը**

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

1. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն ներկայացվող ՀՀ 5-րդ և 6-րդ զեկույցը (այսուհետ՝ Զեկույց) գրվել է ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից զեկույցների նախապատրաստմանը վերաբերող ուղեցույցների, մասնավորապես, 2009 թվականի հունիսի 3-ին ընդունված HRI/GEN/2/Rev.6 փաստաթղթի համաձայն: Բացի այն որ Զեկույցը ներկայացնում է տեղեկատվություն կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ, Զեկույցն անդրադառնում է նաև ՄԱԿ-ի Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի ՀՀ վերաբերյալ հանձնարարականներին, որոնք ընդունվել են Կոմիտեի թիվ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 2009 թվականի փետրվարի 2-ի փաստաթղթով: Պետք է նշել, որ հանձնարարականների ընդունումից հետո հանձնարարականներն անմիջապես թարգմանվել են հայերեն լեզվով և տարածվել:

2. Սույն զեկույցը նախապատրաստելու նպատակով ՀՀ վարչապետի 2012 թվականի փետրվարի 8-ի N75- Ա որոշման համաձայն ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են եղել ՀՀ արտաքին գործերի, տարածքային կառավարման, կրթության և գիտության, առողջապահության, էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի, արդարադատության նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, դատական դեպարտամենտի և Ազգային ժողովի ներկայացուցիչներ: Զեկույցի նախագիծը քննարկվել է նաև շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններիս

առաջարկներն ու դիտողությունները հաշվի են առնվել զեկույցի վերջնական տարբերակը պատրաստելիս (Կանանց հանդեպ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների 38-րդ կետ):

Հոդված 1

3. ՀՀ Սահմանադրությամբ սահմանված են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները:

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է (հոդված 14.1):

2005 թվականին ՀՀ Սահմանադրության բարեփոխումներից հետո մի քանի տասնյակ գործող օրենքներ համապատասխանվեցին հիմնական օրենքին:

Ինչ վերաբերում է Կոմիտեի հանձնարարականների 18, 19 կետերին, ապա Հայաստանում գործում է ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդ (այնուհետ՝ Խորհուրդ), որի գերակա խնդիրն է՝ աջակցել գենդերային հավասարության արմատավորմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքական որոշումների իրականացմանը՝ կառավարման բոլոր մակարդակներում, հանրապետության ողջ տարածքում և հասարակական-տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում (2012թվ. մարտի 1-ի ՀՀ վարչապետի կողմից հաստատված Խորհրդի աշխատակարգ):

Ներկայումս քննարկման փուլում է գտնվում Խորհուրդը ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և գենդերային քաղաքականության իրականացման ազգային մեխանիզմի վերածելու առաջարկը:

Մասնավորապես, ՀՀ կառավարության խնդրանքով ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի երևանյան գրասենյակի ֆինանսավորմամբ, ՀՀ փորձագետները նախապատրաստել են «Գենդերային հավասարության հասնելու ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմները» թեմայով վերլուծությունը, որը պետք է հիմք հանդիսանա ազգային մեխանիզմի մոդելը որոշելու համար:
Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գործունեությանը, ապա պետք է նշենք, որ գրասենյակում աշխատում է կանանց հարցերով պաշտպանի խորհրդական:
Միևնույն ժամանակ, գենդերային հավասարության և կոնվենցիայի իրականացման գործընթացում կառավարության համակողմանի հաշվետվողականությունը ապահովելու նպատակով ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» որոշումը:

<u>4. Կոմիտեի հանձնարարականների 12-րդ և 13-րդ կետերի</u> իրականացման վերաբերյալ.

Եթե նախորդ տարիներին Հայաստանում պետական քաղաքականության նպատակներից մեկը կանանց վիճակի բարելավումն ու հասարակության մեջ նրանց դերի բարձրացումն էր, ապա վերջին տարիների ընթացքում շեշտադրումները փոխվեցին դեպի կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների հավասարության գաղափարախոսություն, ինչը և արտացոլվեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում: Օրենքն ընդունվել է 2013 թվականի մայիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 108 կողմ ձայնով:

Օրենքի հիմնական նպատակն է բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովումը, իրավական պաշտպանությունը խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը:

Մինչև օրինագծի ընդունումը 2013 թվականի հունվարի 19-ին Ազգային ժողովում պատգամավորների, կառավարության անդամների, մարդու իրավունքների պաշտպանի, հասարակական կազմակերպությունների ու

մի շարք միջազգային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունեցել խորհրդարանական լսումներ:

5. Ի կատարումն Կոմիտեի հանձնարարականների 41-րդ կետի տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիների ընթացքում միացել է խտրականությունը բացառող մի շարք նոր փաստաթղթերի, այդ թվում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» (վավերացվել է 2010 թվականի մայիսի 17-ին, ուժի մեջ է մտել հոկտեմբերի 22-ին) և «Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» (վավերացվել է 2011 թվականի հունվարի 24-ին) կոնվենցիաներին: Տեղեկացնենք նաև, որ վերոհիշյալ կոնվենցիաների դրույթների իրականացման վերաբերյալ ՀՀ առաջին պարբերական զեկույցները ներկայացվել են համապատասխան Կոմիտեներին:
Ինչ վերաբերում է «Միգրանտ-աշխատավորների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» կոնվենցիային, ապա այն Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2013 թվականի սեպտեմբերի 26-ին: Կոնվենցիայի վավերացման հարցը գտնվում է միջգերատեսչական համաձայնեցման փուլում:

**Հոդված 2**

6. ՀՀ Սահմանադրությունը սահմանում է հավասարություն օրենքի առջև: Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

7. Կանանց և տղամարդկանց միջև հավասարության սկզբունքը լայնորեն արտացոլված է ՀՀ ողջ օրենսդրության մեջ: Այսպես, քաղաքացիական օրենսդրությունը հիմնված է իրավահավասարության, սեփականության անձեռնմխելիության, քաղաքացիական իրավունքների իրականացման և դատական կարգով խախտված իրավունքների վերականգնման խնդիրների վրա: Աշխատանքային օրենսգրքով սահմանված է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից,

սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից եւ ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից: Որպես կանանց և երեխա խնամող աշխատողներին տրամադրվող երաշխիքներ՝ Օրենսգրքի 117-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել հղի կնոջ հետ հղիության ամբողջ ժամանակահատվածում: ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը փաստում է ամուսինների իրավահավասարությունն ընտանիքում (24-րդ հոդված) նշելով, որ ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի հասնելը:

8. ՀՀ քրեական օրենսգիրքը (143-րդ հոդված) հանցանք է համարում քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը, մասնավորապես, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, ինչով և քրեականացվում է Սահմանադրության 14.1 հոդվածի խախտումը:

9. Դատական համակարգի անխափան աշխատանքը խտրականությունից պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցն է: ՀՀ Սահմանադրության և այլ օրենսդրական ակտերի համաձայն ՀՀ քաղաքացին կարող է դիմել դատարան իր իրավունքները պաշտպանելու և վերականգնելու համար առանց սեռի հատկանիշով որևէ խտրականության: ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

10. Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված

դատարաններ: Նույն հոդվածում որակապես նոր կարգավիճակով է հանդես գալիս ՀՀ վճռաբեկ դատարանը՝ որպես ՀՀ բարձրագույն դատական ատյան (բացի սահմանադրական արդարադատության հարցերից), որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

11. ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն` առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները, վարչական դատարանը: Նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն` վերաքննիչ դատարաններն են` քրեական վերաքննիչ դատարանը, քաղաքացիական վերաքննիչ դատարանը և վարչական վերաքննիչ դատարանը: Վարչական դատարանը և վարչական վերաքննիչ դատարանը մասնագիտացված դատարաններն են:

12. ՀՀ-ում գործում է նաև Սահմանադրական դատարան, որը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է և ապահովում է ՀՀ իրավական համակարգում ՀՀ Սահմանադրության գերակայությունը: ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն` ՀՀ սահմանադրական դատարանը, ի թիվս այլ լիազորությունների, որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

13. Հայաստանի Հանրապետության դատարաններում 2009 և 2010 թվականներին 216 դատավորներից 46-ը, իսկ 2011 թվականին` 220 դատավորներից 48-ը եղել են կանայք:

2012 թվականի տվյալներով տարեկան միջին հաշվարկով 215 դատավորներից 47-ը կանայք են եղել:

2013 թվականի նոյեմբերի 27-ի դրությամբ 213 դատավորներից 45-ը կին դատավորներ են, որոնցից 14-ը պաշտոնավարում են մարզերի ընդհանուր իրավասության դատարաններում:

ՀՀ արդարադատության խորհրդի 13 անդամներից 3-ը կին են:

ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատավորների թեկնածությունների ցուցակը կազմելու ընթացքում հաշվի

է առնվում սեռային (գենդերային) հավասարակշռությունը: Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակասի դատավորների ընդհանուր թվի քսանհինգ տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն հինգ տեղ:

14. Ներկայումս Հայաստանում շարունակվում է դատաիրավական բարեփոխումների ընթացքը: Ընդունվել է 2012-16թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարական ծրագիր, որտեղ նախատեսված են լայնածավալ միջոցառումներ, թե՛ դատական , թե՛ քրեակատարողական և քրեական օրեսդրության, թե՛ բոլոր այն օրենքների առումով, որոնք կապված են մարդու կանանց իրավուքների հետ:

15. Ինչպես արդեն նշեցինք, խտրականության բացառման հարցերով Հայաստանում զբաղվում են նաև արտադատական մեխանիզմները, մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Համաձայն ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված «2014 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի ՀՀ կառավարությունը Պաշտպանի գործունեության համար անհրաժեշտ բյուջեն ավելացել է մոտ 25 միլիոն դրամով, ինչի արդյունքում շարունակեցին գործել Պաշտպանի արագ արձագանքման ծառայությունը և մարզային գրասենյակները Գավառում, Կապանում, Գյումրիում: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն ամեն տարի հրատարակում է տարեկան զեկույցներ, որտեղ մանրամասն անդրադառնում է մարդու իրավունքների բնագավառում կատարված աշխատանքներին: Այսպես, Պաշտպանի գրասենյակի 2013 թվականի զեկույցի համաձայն գրասենյակը իրավական ծառայություն է մատուցել 6805 անձի:

16. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»: Հայաստանի քաղաքացիները, այդ թվում կանայք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով կարող են դիմել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եվրոպական դատարանում Հայաստանը ներկայացված է կին դատավորով:

17. 2006 թվականի սեպտեմբերի 14-ին Հայաստանը վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, ինչը հնարավորություն է տվել ՀՀ քաղաքացիներին բողոքներ ուղղել Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոմիտեին:

**Հոդված 3**

18. Ելնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված հավասարության սկզբունքից կանայք տղամարդկանց հետ հավասար ունեն բոլոր իրավունքները, ինչը իրենց թույլ է տալիս հավասար ներդրում ունենալ երկրի տնտեսական, սոցիալական, և մշակութային ոլորտներում:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներ են.

1) պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը եւ մանկությունը,
2) նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը,
3) խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը.
4) իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը,
5) նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին,
6) խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը,
7) իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին,
8) նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը,
9) նպաստել գիտության և մշակույթի զարգացմանը,
10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն,

11) նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը,
12) ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը:

Այսպիսով, պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար:

19. 2010 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվեց Գենդերային քաղաքականության հայեցակարգը:
Այս ծրագրային փաստաթուղթը լուրջ ներդրում է երկրում գենդերային հավասարությունն ապահովելու ուղղությամբ, քանի որ այն սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները և հիմք է ծառայում պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար գենդերային հավասարության ապահովման հստակ միջոցառումների մշակման գործում:

Գենդերային հայեցակարգի նպատակն է հավասար պայմանների ստեղծումը, սեռի հատկանիշով խտրականության բոլոր ձևերի հաղթահարումը, աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիության ստեղծումը, հասարակության մեջ ժողովրդավարական քաղաքական մշակույթի և հանդուրժողականության գենդերային երկխոսության ձևավորումը՝ կյանքի բոլոր ոլորտներում գենդերային չափանիշի ներառման միջոցով:

20. ՀՀ կառավարության կողմից գենդերային քաղաքականության իրականացման ապահովման գործում կարևոր նշանակություն ունի 2011 թվականի մայիսի 20-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունված «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագիրը» (հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի որոշմամբ):

Գենդերային ռազմավարական ծրագրի միջոցառումները իրականացվում են մի քանի ուղղություններով.

1) Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում;

2) Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը սոցիալ-տնտեսական ոլորտում;

3) Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունն առողջապահության ոլորտում;

4) Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը կրթության ոլորտում;

5) Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը մշակույթի և հանրային տեղեկատվության ոլորտներում;

6) Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման ոլորտում:

Հաստատված միջոցառումների շրջանակում մեկնարկել են գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցիչների մշակման և ներդրման աշխատանքները: Աշխատանքներ են տարվում գենդերային հավասարության քաղաքականության մշակման և իրականացման ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմներ ներառող միասնական համակարգի հզորացման, բյուջետավորման և պլանավորման գործընթացներում (գենդերային բյուջետավորման կիրառում (աստիճանական) բյուջետային ցիկլի տարբեր փուլերում) գենդերային բաղադրիչի ներդրման ուղղությամբ:

21. Կոմիտեի հանձնարարականների 11-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են բազմաթիվ քարոզարշավներ՝ տարբեր նպատակային խմբերում

գենդերային հիմնախնդիրների լուսաբանման, գենդերային հավասարության մեխանիզմերի ներդրման ուղղությամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների համար համայնքներում պարբերաբար իրականացվում են գենդերային քաղաքականության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

Համայնքային մակարդակում գենդերային հավասարությունն ապահովելու և կանանց նկատմամբ խտրականությունը կանխելու նպատակով 2014 թվականից համայնքներում ներդրվել է գենդերային հավասարության ապահովման մեթոդական ուղեցույց:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ 2013 թ. ապրիլին մեկնարկած ծրագրով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի հետ իրականացնում է «Երևանի քաղաքապետարանում և մարզերում գործող գենդերային հարցերով մշտական հանձնաժողովների կարողությունների գնահատում և դասընթացների կազմակերպում» ծրագիր, որի նպատակն է բացահայտել հանձնաժողովների անդամների կազմակերպչական և մասնագիտական կարողությունները, ինչպես նաև գնահատել նրանց անհատական կարողությունները (միջանձնային շփումներ, արդյունավետ հաղորդակցման և բանակցությունների վարման հմտություններ, լիդերական հատկանիշների առկայություն): Ստացված տվյալների վերլուծության հիման վրա մշակվել են դասընթացի մոդուլներ հետևյալ թեմաներով.

1) Գենդեր, գենդերային սոցիալականացում, գենդերային հավասարություն, գենդերային հավասարակշռություն հասկացությունները:
2) Գենդեր մեյնսթրիմինգի (գենդերային ներուղղման) էությունը:
3) Գենդերային արդյունավետ քաղաքականության և ռազմավարական ծրագրերի մշակման համար անհրաժեշտ ցուցիչների կիրառումը և հավաքագրումը:
4) Գենդերային բաղադրիչի բացահայտումը համայնքային խնդիրների վերլուծության համատեքստում:
5) Ռազմավարական պլանավորումը մարզային և համայնքային (գենդերային) խնդիրների արդյունավետ լուծման գործում:

22. <u>Կոմիտեի հանձնարարականի 42-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք,</u> որ ընդունված պրակտիկայի համաձայն ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից տրված հանձնարարականները անմիջապես թարգմանվում են ՀՀ ԱԳՆ կողմից և տրամադրվում ՀՀ Ազգային ժողովին և շահագրգիռ նախարարություններին ու գերատեսչություններին : Կանանց հանդեպ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները թարգմանվել և տարածվել են նաև տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից:

23. 2011 թվականի հունվարի 1-ին ՀՀ ԱԺ (ՀՕ-243-Ն) կողմից ընդունվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, որով սահմանվում են կանանց համար արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետները: Տարեց մարդկանց համար արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու համար պետությունը վարում է կենսաթոշակների չափերի հետևողական և շարունակական բարձրացման քաղաքականություն:

<u>24. Կոմիտեի հանձնարարականների 40-րդ կետի վերաբերյալ</u> տեղեկացնում ենք, որ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել զարգացման բնագավառում, այնուամենայնիվ 2008 թվականից սկսած երկիրը կրեց տնտեսական ճգնաժամի ազդեցությունը, ինչը լուրջ խոչընդոտ հանդիսացավ աղքատության դեմ պայքարի հաղթահարման գործում:
Բացի այդ խախտելով միջազգային նորմերը, Թուրքիան և Ադրբեջանը երկար տարիներ իրականացնում են Հայաստանի շրջափակումը: Նշված շրջափակման արդյունքում երկիրը ամեն տարի կրում է տասնյակ միլիոնների վնաս, մասնավորապես, շրջափակումը լուրջ բացասական ազդեցություն է ունենում Հայաստանից ապրանքների արտահանման աճի և ներկրվող ապրանքների գների իջեցման վրա: Համաշխարհային բանկի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եթե Հայաստանը չլիներ շրջափակման մեջ, երկրի համախառն ներքին արդյունքը զգալի աճ կունենար:

Կոմիտեի հանձնարարականի 39-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Հայաստանն առաջիններից է որ մշակել և ՄԱԿ-ի Կանանց

կարգավիճակի հանձնաժողովին է ներկայացրել Պեկին+20 ազգային վերլուծությունյունը, որում մանրամասն անդրադարձ է արվում Պեկին հռչակագրի կետերի իրականացմանը: Զեկույցի անգլերեն տարբերակը տեղադրված է հետևյալ կայքէջում - http://www.unwomen.org/~/media/Headquarters/Attachments/Sections/CSW/59/National_reviews/Armenia_review_Beijing20.pdf

ՄԱԿ-ի Հազարամյակի մարտահրավերների իրականացման արդյունքների վերաբերյալ վերջին զեկույցում ՀՀ-ին առնչվող հատվածում նշվում է, որ երկիրը հաջողությամբ մոտենում է 3-րդ նպատակի իրականացմանը (գենդերային հավասարություն), 6-րդ նպատակի իրականացմանը (ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի դեմ պայքար) և 7-րդ նպատակին (էկոլոգիական կայության ապահովում):

Հինգերորդ նպատակի (մայրական առողջության բարելավում) իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը տես զեկույցի 12-րդ հոդվածում:

<u>25. Կոմիտեի հանձնարարականների 36-րդ և 37-րդ կետերի վերաբերյալ.</u>

***Կանանց խոցելի խմբեր***

*<u>Հաշմանդամներ</u>*

Հաշմանդամների հիմնախնդիրները կանոնակարգվում են ինչպես «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (1993թ.), այնպես էլ այլ իրավական ակտերով:

Ներկայումս մշակվել և ՀՀ Կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

26. Հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն ուղղված իրականացվող ծրագրերի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալ իրենց զգալ հասարակարգի լիարժեք անդամ:

27. Ստորև բերված աղյուսակում ներկայացված է հանրապետությունում հաշմանդամների թվաքանակը կին/տղամարդ/երեխա կտրվածքով սկսած 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը:

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հաշմանդամների թվաքանակը 01.01.2010-ի դրությամբ** | | | | |
| | ընդամենը | նրանցից՝ կանայք | Սյունակ 1-ից քաղաքաբնակ | |
| | | | ընդամենը | նրանցից՝ կանայք |
| Հաշմանդամներ, ընդամենը | 179257 | 80169 | 129183 | 60017 |
| Մինչև 18 տարեկան | 8358 | 2581 | 5274 | 1671 |
| 18-ից մինչև 40 տարեկան | 26891 | 8173 | 18476 | 5763 |
| 40-ից մինչև կենսաթոշակային | 87829 | 39902 | 59873 | 27779 |
| Կենսաթոշակային տարիքի և բարձր | 56179 | 29513 | 45560 | 24804 |
| **Հաշմանդամների թվաքանակը 01.01.2011-ի դրությամբ** | | | | |
| | ընդամենը | նրանցից՝ կանայք | Սյունակ 1-ից քաղաքաբնակ | |
| | | | ընդամենը | նրանցից՝ կանայք |
| Հաշմանդամներ, ընդամենը | 185080 | 83941 | 175889 | 79703 |
| Մինչև 18 տարեկան | 8045 | 2527 | 5164 | 1653 |
| 18-ից մինչև 40 տարեկան | 27308 | 8402 | 17997 | 5644 |
| 40-ից մինչև կենսաթոշակային | 92522 | 40579 | 107128 | 42914 |
| Կենսաթոշակային տարիքի և բարձր | 57205 | 32433 | 45600 | 29492 |
| **Հաշմանդամների թվաքանակը 01.01.2012-ի դրությամբ** | | | | |
| | ընդամենը | նրանցից՝ | Սյունակ 1-ից քաղաքաբնակ | |

| | | կանայք | ընդամենը | նրանցից՝ կանայք |
| --- | --- | --- | --- | --- |
| Հաշմանդամներ, ընդամենը | 176506 | 81901 | 123965 | 59796 |
| Մինչև 18 տարեկան | 7973 | 2544 | 5025 | 1599 |
| 18-ից մինչև 40 տարեկան | 27125 | 8523 | 17683 | 5608 |
| 40-ից մինչև կենսաթոշակային | 93649 | 48450 | 63981 | 34108 |
| Կենսաթոշակային տարիքի և բարձր | 47759 | 22384 | 37276 | 18481 |

| **Հաշմանդամների թվաքանակը 01.01.2013-ի դրությամբ** | | | | |
| --- | --- | --- | --- | --- |
| | ընդամենը | նրանցից՝ կանայք | Սյունակ 1-ից քաղաքաբնակ | |
| | | | ընդամենը | նրանցից՝ կանայք |
| Հաշմանդամներ, ընդամենը | 186384 | 87419 | 130238 | 63454 |
| Մինչև 18 տարեկան | 8078 | 2526 | 5025 | 1596 |
| 18-ից մինչև 40 տարեկան | 27424 | 8523 | 17767 | 5647 |
| 40-ից մինչև կենսաթոշակային | 97897 | 50333 | 66164 | 35112 |
| Կենսաթոշակային տարիքի և բարձր | 52985 | 26037 | 41282 | 21099 |

28.Հաշմանդամների համար մատչելի պայմաններ ապահովելու և նրանց հասարակություն ինտեգրելու նպատակով իրականացվում են բազմաթիվ ծրագրեր: Ընդ որում բոլոր ծրագրերը հավասարաչափ միտված են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց և բացառում են խտրականությունը այս կամ այն սեռի նկատմամբ: Այնուամենայնիվ շատ խնդիրներ դեռևս լուծման կարիք ունեն, իսկ հաշմանդամների զբաղվածության ապահովման

խնդիրը շարունակում է մնալ սոցիալական ոլորտի դժվար լուծելի հիմնախնդիրներից մեկը:

29. Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոնի աշխատակիցները պարբերաբար այցելում են հաշմանդամի տուն, ուսումնասիրում նրանց ընտանեկան, սոցիալական, հոգեբանական վիճակը, բացահայտում առաջնահերթ խնդիրները և տրամադրում համապատասխան խորհրդատվություն հաշմանդամներին և նրանց ընտանիքի անդամներին:
Հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները, համագործակցելով պետական կառույցների հետ, իրականացնում են ծրագրեր աշխատանքի տեղավորման, մասնագիտական ուսուցման և կողմնորոշման ուղղությամբ:

30. Այնուամենայնիվ, հասարակության մեջ լիարժեք սոցիալական ինտեգրման համար առկա են մի շարք խնդիրներ: Բացակայում է վերականգնման միասնական համակարգը: Հաշմանդամների վերականգնման ծառայությունները ապահովված չեն որակավորում ունեցող մասնագետներով, քանի որ ուսումնական հաստատությունները չեն պատրաստում բժիշկ-վերականգնողաբանի որակավորում ունեցող մասնագետներ: Վերաորակավորման և վերապատրաստման կրթական համակարգերը մատչելի չեն հաշմանդամների համար: Չկան հաշմանդամների աշխատանքային վերականգնման տարածքային կենտրոններ:

*<u>Փախստականներ</u>*

31. Հայաստանն ընդունեց առաջին փախստականներին 1988 թվականին, դրանք այն մարդիկ էին, որոնք փրկվել էին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում փետրվարի 26-29-ին հայերի հանդեպ իրականացված ջարդերից:
1990 թվականի հունվարի 10-13-ին իրականացվեցին հայերի ջարդերը Բաքվում, ինչի արդյունքում Բաքվից տարհանվեց ողջ հայ բնակչությունը: Միաժամանակ Ադրբեջանը սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմը, ինչի արդյունքում 1990-1991թթ. հայաթափվեցին

Կիրովաքադի, Խանլարի, Գետաշենի, Շահումյանի և այլ վայրեր: Արդյունքում, Հայաստանն ընդունեց Ադրբեջանից բռնագաղթած ավելի քան 400.000 փախստականների: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի տվյալների համաձայն մինչև 2005 թվականը Հայաստանը գլխավորել է 1000 բնակչի հաշվարկով փախստականների ամենաշատ քանակն ունեցող երկրների ցանկը:

32. Հայաստանի Հանրապետությունը փախստականներին ընդունելու առաջին իսկ օրերից որդեգրեց հասարակության մեջ փախստականների ինտեգրման քաղաքականություն, չնայած այն հանգամանքի, որ երկիրը գտնվում էր դժվարին սոցիալ-տնտեսական իրավիճակում: Փախստականների ինտեգրման քաղաքականությունն առավել շոշափելի արդյունքներ տվեց սկսած 2000 թվականից, երբ սկսեց գործել փախստականների հիմնահարցերով զբաղվող առանձնացված կառույցը՝ ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը՝ ներկայումս Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայությունը:

33. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ 2008 թվականի նոյեմբերի 27-ի օրենքով հատուկ երաշխիքներ են նախատեսված կին ապաստան հայցողների համար՝ հաշվի առնելով նրանց առանձնահատուկ վիճակն ու խոցելիությունը: Օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասով, մասնավորապես, սահմանված է, որ կին ապաստան հայցողի հետ հարցազրույցը, վերջինիս ցանկությամբ, անցկացնում է լիազոր մարմնի կին աշխատակիցը՝ անհրաժեշտության դեպքում կին թարգմանչի միջոցով:
Կին ապաստան հայցողների հատուկ կարիքները հաշվի են առնված նաև ապաստան հայցողների ընդունելության պայմանները կարգավորող ՀՀ իրավական ակտերում: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1440-Ն որոշման 10-րդ կետի համաձայն՝ ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելիս մի շարք այլ հանգամանքների հետ մեկտեղ հաշվի է առնվում նաև ապաստան հայցողների սեռը: Նույն որոշման 11-րդ կետի համաձայն՝ միևնույն

ընտանիքին չպատկանող տարբեր սեռի անձինք չեն կարող տեղավորվել միևնույն սենյակում:

Համանման երաշխիքներ են նախատեսված նաև ՀՀ անօրինական մուտք գործած ապաստան հայցողներին ՀՀ պետական սահմանի անցման կետերում կամ տարանցիկ գոտիներում ստեղծվող հատուկ կացարաններում պահելու հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտով: ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում և տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության ու օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» N 783-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անցման կետում պետք է լինի առնվազն երկու սենյակ՝ տարբեր սեռերի անձանց համար: Նույն որոշման 8-րդ կետի համաձայն՝ արգելվում է օտարերկրացիների անձնական զննումն իրականացնել հակառակ սեռի ներկայացուցչի կողմից:

34. Փախստական կանայք, որպես առավել խոցելի խումբ առանձին ուշադրության են արժանանում փախստականների համար իրականացվող՝ տարբեր ուղղվածություն ունեցող ծրագրերում: Այդ մասին են վկայում ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ վերջին շրջանում իրականացված՝ ստորև բերված ծրագրերում փախստական կանանց համար նախատեսված քվոտաները.

1) Եկամուտների ստեղծմանն ուղղված ծրագիր – Իրականացնող՝ Հայկական կարմիր Խաչի ընկերակցություն – կանանց մասնաբաժինը նախատեսված է եղել 50%, սակայն իրականում կազմել է 77%,
2) Ամառային ճամբար ծրագիր – իրականացնող՝ ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա, աղջիկների համար նախատեսված քվոտան կազմել է 50%,
3) Միկրո –ֆինանսավորման ծրագիր –իրականացնող՝ Փոքր և միջին բիզնեսի զարգացման ազգային կենտրոն, փախստական կանանց հանար նախատեսված քվոտան կազմել է 40%:

Բացի այդ, ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ Հայկական Կարմիր Խաչի ընկերակցության կողմից մշակվել և իրականացվում է <<Սեռական և գենդերային բռնությունների

կանխարգելում և արձագանք>> ծրագիրը, որը վերաբերում է հոգեբանական խանգարումներ ունեցող կամ սեռական և գենդարային բռնությունների զոհ հանդիսացող փախստական թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց և բացառում է խտրականությունը այս կամ այն սեռի նկատմամբ: Ծրագիրն ուղղված է վերջիններիս՝ հոգեբանական ծառայությունների տրամադրմանը, անհրաժեշտության դեպքում նրանց առավել նեղ մասնագետների մոտ կամ այլ հաստատություններ ուղղորդմանը, ինչպես նաև բժշկական, իրավաբանական, սոցիալական և այլ կարիքների բավարարմանը:

35. Ոլորտի օրենսդրությունը անդրադառնում է փախստականների հիմնախնդիրներին «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում: Փախստականները ներառված են անմրցունակ խմբերի ցանկում (հոդված 20) և ունեն սոցիալական պաշտպանության լրացուցիչ երաշխիքների իրավունք աշխատանքի տեղավորման հարցում: Զբաղվածության ծրագրերը հավասարաչափ ուղղված են ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց:

*Փոքրամասնություններ*

36. Ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման խնդիրը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Հայաստանը, դեռ չլինելով Եվրոպայի խորհրդի անդամ, 1997 թվականին ստորագրել և 1998թ. վավերացրել է ԵԽ Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան: 2001 թվականին Հայաստանը ստորագրել և այնուհետև վավերացրել է նաև Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան: Այսպիսով, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ շրջանակներում այս հարցի վերաբերյալ ստանձնած պարտավորությունների հետ միասին, ՀՀ-ն իր վրա է վերցրել նաև ԵԽ շրջանակներում իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերից բխող պարտավորություններ:

ՀՀ-ում հայերի հետ միասին ապրում են 20-ից ավելի ազգություններ, որոնցից 11-ը ազգային փոքրամասնություններ են: Դրանք են ասորիները, հույները, վրացիները, հրեաները, եզդիները, քրդերը, գերմանացիները, լեհերը, ռուսները, բելառուսները, ուկրաինացիները և այլն:

Ազգային փոքրամասնությունների մեջ մեծամասնությունը կազմում են եզդիները՝ 40 620 մարդ կամ ՀՀ բոլոր ոչ այլազգի քաղաքացիների մոտ 73 տոկոսը: Նրանց զգալի մասը բախշված է հանրապետության մարզերում, ապրում են դիսպերս, ինչը որոշ իմաստով բարդացնում է ազգային փոքրամասնությունների առանձին խմբերի կրթության ու մշակույթի, ինքնության հավաքական-խմբային իրավունքների իրականացումը: Բնականաբար նրանք բոլորը միասին, և առանձին-առանձին՝ որպես էթնիկ համայնքներ, ինչպես նաև որպես անհատ քաղաքացիներ ազգային փոքրամասնությունների իրավունքի կրող են:

37. ՀՀ կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում ՀՀ տարածքում ապրող և ազգային պետականություն չունեցող էթնիկ համայնքների կրթամշակութային խնդիրներին: Այդպիսիք են այս պահին եզդիները, ասորիները և քրդերը:

38. 2000թ. սկսած ՀՀ պետական բյուջեից տարեկան 10 մլն դրամ դրամաշնորհային գումար էր հատկացվում ազգային փոքրամասնությունների կրթամշակութային խնդիրների զարգացման համար: 2012 թվականից սկսած այս գումարը կրկնապատկվել է և դարձել 20 մլն.: Այն իրացվում է Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կողմից:

39. ՀՀ կառավարության 22 ապրիլի 2004թ. թիվ 565-Ա որոշմամբ Երևանի կենտրոնում 800 քառակուսի մետր տարածք է հատկացվել ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոնի ստեղծման համար: 2006թ. ընթացքում տարածքը վերանորոգվել, բարեկարգվել և կահավորվել է: Կենտրոնը, որը բացվել է 2007 թվականին, մեծապես նպաստում է ազգային փոքրամասնությունների մշակութային բազմազանության ցուցադրությանն ու զարգացմանը, դրանց մասին

տեղեկատվության մեծացմանը: Այն բոլոր հնարավորությունները տրամադրում է ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցման, օգտագործման և զարգացման համար: Այդ հնարավորությունն ունեն ՀՀ բոլոր էթնիկ համայնքները:

40. ՀՀ օրենսդրությունը հնարավորություն է ընձեռնում ՀՀ տարածքում ապրող բոլոր ազգային փոքրամասնություններին պահպանել իրենց մայրենի լեզուն: ՀՀ լեզվական քաղաքականության հիմնական դրույթները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, Լեզվի մասին ՀՀ օրենքով, ինչպես նաև «ՀՀ լեզվաքաղաքականության պետական ծրագրով»: Սահմանադրութան մեջ և օրենքում նշվում է, որ ՀՀ-ը իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը, այդ թվում՝ կրթության ոլորտում: Գործող Սահմանադրության հոդված 41-ում ձևակերպված է. «Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք»: ՀՀ գործող օրենսդրությունը որևէ արգելք չի նախատեսում փոքրամասնությունների լեզուների գործածման ոլորտում, ինչպես նաև օրենսդրական կամ գործնական միջոցներ չի նախատեսում կամ իրականացնում, որոնք ուղղված լինեին որևէ լեզվի պահպանմանը կամ զարգացմանը վնասելուն կամ վտանգելուն:

41. Հայաստանի ներսում տարբեր էթնիկ համայնքների համագործակցությունն ունի բազմաթիվ ձևեր: Գործում են ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միություններ, ասոցիացիաներ: ՀՀ-ում ինքնակազմակերպված գործում են շուրջ 11 էթնիկ համայնքների 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնց աշխատանքների մի մասն ուղղված է նաև մայրենի լեզուների պահպանությանն ու զարգացմանը:

*Միայնակ մայրեր*

42. Հայաստանում միայնակ մայրերը չեն կազմում առանձին սոցիալական խումբ, սակայն սովորաբար ընդգրկվում են խոցելի խմբերի համար նախատեսված սոցիալական ծրագրերում, քանի որ որպես կանոն իրենց սոցիալական ցուցանիշները համապատասխանում են լրացուցիչ աջակցություն ստացող խմբերի նկատմամբ ներկայացված պահանջներին: Այս ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն են «անմրցունակ խմբեր» («Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք), կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք («Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք):

**<u>Հոդված 4</u>**

43. ՀՀ օրենսդրությունում գոյություն չունի սեռի հատկանիշով որևէ խտրականություն: Միևնույն ժամանակ, պետական մարմինները՝ յուրաքանչյուրն իր ոլորտում պարբերաբար իրականացվող վերլուծություններում թեև ներկայացնում են վիճակագրական տվյալներ կին/տղամարդ բաշխվածությամբ, սակայն չեն գնահատում իրավակիրառ պրակտիկան կանանց և տղամարդկանց վրա ազդեցության տեսանկյունից:

Այս առումով հարկ է նշել, որ փաստացի հավասարության հասնելը մի խնդիր է, որը պահանջում է զգալի ջանքեր թե՛ պետական կառույցների և թե՛ քաղաքացիական հասարակության կողմից:

2013 թվականի մայիսին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին», օրենքը սահմանում է ինչպես գենդերային հավասարության պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում գենդերային հավասարության երաշխիքները պետության կառավարման և հանրային ծառայության մեջ, այնպես էլ հստակեցվում են գենդերային խտրականության ձևերը:

44. Կոմիտեի հանձնարարականների 16-րդ կետի իրականացման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը պայմանավորված է պետության կողմից սոցիալական և իրավական առանձնակի ուշադրության կարիք ունեցող անձանց վիճակի բարելավմանն ուղղված մտահոգությամբ: Որպես առաջնահերթություն ընդունելով գենդերային հավասարության խնդիրները, ՀՀ ընդունում և հետևողականորեն իրականացնում է ազգային ծրագրեր:
2011 թվականին հաստատված ազգային ծրագիրը վերաբերում է 2011-2015 թթ. ժամանակահատվածին և ուղղված է լուծելու կանանց խնդիրները սոցիալական, տնտեսական և այլ ոլորտներում: Այն իրականացվում է հասարակության տարբեր հատվածների հետ սերտ համագործակցությամբ, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլն:

**Հոդված 5**

45. Կոմիտեի հանձնարարականների 20-21 կետեր

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի օրենսդրությունը չի պարունակում կանանց իրավունքները սահմանափակող դրույթներ: Միևնույն ժամանակ հասարակարգում կա հստակ պատկերացում ընտանիքում կանանց և տղամարդկանց դերերի բաշխման վերաբերյալ: Հասկանալի է նաև, որ գենդերային կարծրատիպերը հիմնականում ձևավորվում են վաղ հասակում և դրանք հաղթահարելու հիմնական միջոցը կրթական ծրագրերի իրականացումն է: Հաշվետու ժամանակահատվածում գենդերային հավասարության հարցերի վերաբերյալ իրականացվել են հետևյալ կրթական ծրագրերը.

ա) Քաղաքացիական ծառայողների գենդերային զգայունության բարձրացման նպատակով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքներ» և «Գենդերային հիմնախնդիրներ» թեմաներով վերապատրաստման ծրագրերում ներդրվել է գենդերային գիտելիքների հաղորդման բաղադրիչ (մոդուլ): Յուրաքանչյուր տարի շուրջ 200 քաղծառայողներ մասնակցում են պարտադիր վերապատրաստման դասընթացներին,

բ) մշակվել է գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցիչների համակարգ: Ներկայումս տարվում են դրա ներդրման աշխատանքները,
գ) առաջին անգամ արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում ներառված են գենդերային վերլուծության, գնահատման և մշտադիտարկման բաղադրիչները, որոնց շրջանակներում աղետների ռիսկերի կառավարման ոլորտում՝ պետական, մարզային և համայնքային մակարդակներով ներդրվելու են գենդերային ուղղորդումը և վերլուծությունը, համապատասխան միջոցներն (մեխանիզմներն) ու ռեսուրսները:

46. Գենդերային կարծրատիպերի հաղթահարման գործընթացում մեծ դեր են կատարում հայաստանյան հեռուստառադիոընկերությունները:
Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով գործում է անկախ կարգավորող մարմին:
Հայաստանի Հանրապետությունում գործում են հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերություններ:

2010թ.-ին անցկացրած թվային հեռարձակման ցանցի միջոցով հանրապետական, մայրաքաղաքային, տարածքային սփռման հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու մրցույթներում լիցենզավորված անձի ընտրության ժամանակ անկախ կարգավորող մարմինը հաշվի է առնում՝ մասնավոր հեռուստաընկերությունների եթերային քաղաքականության ծրագրերը, որոնց բաղադրիչներից մեկն էլ՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը՝ համաձայն մասնակիցների ներկայացրած բիզնես ծրագրի:

Գործող հեռուստառադիոընկերությունների եթերային քաղաքականության ծրագրերը՝ ուղղված գենդերային հավասարության ապահովմանը, ներառում են հաղորդումներ, որտեղ ակտիվ լուսաբանվում են ( ռադիոյի դեպքում՝ հեռարձակվում են) միջոցառումներ ուղղված կանանց հանդեպ բռնության տարբեր ձևերի կիրառմամբ, կանանց նկատմամբ ընտանեկան, կին լրագրողների, կին գործարարների հանդեպ բռնության դեպքերի վերացմանը: Ձեռնարկվում են հաղորդումներ՝ ուղղված կանանց և

աղջիկներին մարմնավաճառությամբ զբաղվելուն դրդող հանգամանքների բացահայտմանն ու վերացմանը: Լրատվական և հրապարակախոսական հաղորդումներում կինը հանդես է գալիս որպես հասարակության լիիրավ անդամ: Լուսաբանվում են բռնության ենթարկված կանանց հասարակության մեջ վերաինտեգրվելու, մասնագիտական հմտություններ ձեռք բերելու, ինչպես նաև կանանց կյանքի մակարդակը բարելավելու, նրանց մասնակցությունը երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին, հասարակության մեջ նրանց դերի ընդլայնմանն ուղղված միջոցառումները:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով («Հեռուստառադիոհաղորդումների չարաշահման անթույլատրելիությունը») արգելվում է բռնության և դաժանության քարոզ կամ պաշտամունք պարունակող հաղորդումների, էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի և անչափահասների առողջության, մտավոր ու ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակումը: Սակայն չկան այն մեխանիզմները, որոնք կտան արգելվող բովանդակության սահմանման, ժամանակային սահմանափակման որոշման չափանիշները: ՀՀ նախագահը, կարևորելով բարձրացված խնդիրները, դիմել է Հանրային խորհրդին՝ իր հովանու տակ առնել հարցը՝ Հեռուստատեսության և Ռադիոյի ազգային հանձնաժողովի, հեռուստաընկերությունների ղեկավարների, խնդրով մտահոգ հասարակական կազմակերպությունների և մտավորականների հետ համատեղ կազմակերպելով քննարկումներ և մշակելով ինչպես Հանրային, այնպես էլ մասնավոր հեռուստաընկերությունների եթերային քաղաքականությունը փոխելու ծրագրեր:

Համաձայն 2010թ. հունիսի 10-ի Ազգային ժողովի կողմից ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, բաղկացած է հինգ անդամից, որոնցից առնվազն մեկը կին է:

Համաձայն հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գործող «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի բ) մասով արգելվում է այն գովազդը,

որում պարունակվում են ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական և այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ:

47. Հայաստանում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվում է դասագրքերի գենդերային վերլուծություն և ներկայումս Կառավարության խնդիրն է համակարգել այդ հետազոտությունները և փոխկապակցել դրանք դպրոցներում Մարդու իրավունքների դասավանդման հետ:

48. Ինչ վերաբերում է Կոմիտեի 22 և 23-րդ կետերում զետեղված հանձնարարականին, ապա պետք է տեղեկացնենք, որ 2011 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը և Ընդդեմ գենդերային բռնության 2011 թվականի միջոցառումների ծրագիրը:
Այս փաստաթղթերն իրականացվում են երեք ուղղություններով՝ կանխում, կանխարգելում, աջակցություն:
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բռնությունը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով, մասնավորապես, Քրեական օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով, Ընտանեկան օրենսգրքով: Համաձայն այս իրավական ակտերի բռնությունն ըստ տուժողի սեռի առանձնացված չէ: Քրեորեն պատժելի է ցանկացած բռնություն անկախ սեռից: Քրեորեն պատժելի են բռնությամբ զուգորդվող հանցագործությունները, որոնք կարող են գործադրվել նաև ընտանիքում: Հարկ է նշել, որ որոշ հոդվածներում ծանրացուցիչ են համարվում հղի կանանց և անչափահասների նկատմամբ կատարված բռնությունները:
49. Թարգմանվել և տարածվել է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին» կոնվենցիան:
50. Հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնակցությամբ մշակվել էր նաև «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը սահմանված կարգով ներկայացվել էր ՀՀ

կառավարության քննարկմանը: Սակայն, հաշվի առնելով այն, որ հանրապետությունում ընթանում են իրավական և դատական բարեփոխումներ, ՀՀ կառավարությունը հանձնարարեց ՀՀ արդարադատության ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին՝ այդ բարեփոխումների ծրագրի շրջանակներում մի շարք իրավական ակտերում փոփոխություններ կատարելիս «ապահովել ընտանեկան բռնության դրսևորումների, ինչպես նաև դրանց արձագանքելու և կանխարգելելու գործուն մեխանիզմների ներառումը», ինչպես նաև հանձնարարվել է ՀԿ-ների հետ քննարկել և արդեն իսկ գործող սոցիալական աջակցության և պաշտպանության ծրագրերում ներառել հնարավոր նոր միջոցառումներ:

51. Հաշվի առնելով խնդրի կարևորությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն 2012-2013թթ. իրականացրել է «Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը Հայաստանում**»** ծրագիրը:
Իրականացվել է հետազոտություն, որը հնարավորություն է տվել պարզել ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց մատուցվող ծառայությունների տիպերը, բաշխվածությունը, որակը, արդյունավետությունն ու մատչելիությունը:
Հետազոտության արդյունքում առանձնացվեցին մի շարք ինստիտուցիոնալ, բարոյահոգեբանական և ֆինանսական խնդիրներ:
Ներկայումս աշխատանքներ են տարվում հետազոտության արդյունքում ձևավորված առաջարկությունների՝ օրենսդրական, կառուցակարգային և ծրագրային, իրականացման ուղղությամբ:
52. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուշադրության կենտրոնում են գտնվում բռնության դեպքերի կանխարգելման և պայքարի հետ կապված աշխատանքների կազմակերպումը, դրանց բացառումը, որի արդյունքում 2013 թվականի փետրվարի 16-ի ՀՀ ոստիկանության պետի հրամանով առաջին անգամ, ստեղծվեց առանձին ստորաբաժանում, որը զբաղվում է ընտանեկան բռնության հիմնախնդիրներով՝ «Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն»: Այս վարչությունը նաև առաջինն է ԱՊՀ պետությունների մեջ: Վարչությունը ուսումնասիրում, վերլուծում, հաշվառում է երեխաների, կանանց, ընտանեկան բռնության դեպքերը, աջակցում բռնության զոհերին:

Ընտանեկան բռնության, ինչպես նաև կանանց նկատմամբ յուրաքանչյուր բռնության դեպք, համապատասխան կարգով, գրանցվում է ոստիկանության տարածքային բաժնում: Կատարվում է տվյալների հավաքագրում, իրականացվում է առանձնացված հաշվառում ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում:

2009 թվականին գրանցվել է կանանց նկատմամբ բռնության 1322 դեպք, որից ընտանեկան՝ 235, նույն ժամանակահատվածում գրանցվել է անչափահասների նկատմամբ 135 դեպք, որից 3-ը ընտանեկան բռնության դեպքեր են:

2010 թվականին գրանցվել է կանանց նկատմամբ բռնության 1526 դեպք, որից ընտանեկան 367, որից 9-ը ընտանեկան բռնության դեպքեր են: Նույն ժամանակահատվածում գրանցվել է անչափահասների նկատմամբ 185 դեպք, որից 9-ը ընտանեկան բռնության դեպքեր են:

2011 թվականի ընթացքում գրանցվել է կանանց նկատմամբ բռնության 1738 դեպք, որից ընտանեկան՝ 560: Նույն ժամանակահատվածում գրանցվել է անչափահասների նկատմամբ 168 դեպք, որից 14-ը ընտանեկան բռնության դեպքեր են:

2012 թվականի ընթացքում գրանցվել է կանանց նկատմամբ բռնության 2026 դեպք, որից ընտանեկան 625: Նույն ժամանակահատվածում գրանցվել է անչափահասների նկատմամբ 190 դեպք, որից 13-ը ընտանեկան բռնության դեպքեր են:

2013 թվականի 9 ամիսների ընթացքում գրանցվել է կանանց նկատմամբ բռնության 1449 դեպք, որից ընտանեկան՝ 432: Նույն ժամանակահատվածում գրանցվել է անչափահասների նկատմամբ 199 դեպք, որից 13-ը ընտանեկան բռնության դեպքեր են:

**Հոդված 6**

53. Ի պատասխան Կոմիտեի հանձնարարականների 24-27-ը կետերի տեղեկացնում ենք, որ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է մեծ աշխատանք թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակներում, այդ թվում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, ինչպես թրաֆիքինգի

կանխարգելման, այնպես էլ զոհերի աջակցության ու պաշտպանության ուղղությամբ: Ինչպես տեղեկացրել ենք, ՀՀ վարչապետի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 861-Ա որոշմամբ ստեղծվել և գործում է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի նախագահությամբ: Խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով նույն որոշմամբ ստեղծվել է նաև նրան կից աշխատանքային խումբ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության ղեկավարությամբ:

Խորհրդի և աշխատանքային խմբի անդամներ են բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարները: Եվ՛ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի, և՛ նրան կից աշխատանքային խմբի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում են ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունների ու Հայաստանում ներկայացված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Խորհրդի և աշխատանքային խմբի համատեղ ջանքերի շնորհիվ մշակվել է 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման չորրորդ ազգային ծրագիրը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2013 թ. փետրվարի 28 N186-Ն որոշմամբ:

Նշենք, որ մարդկանց առևտուրը, որպես առանձին հանցատեսակ ընդգրկվել և ուժի մեջ է մտել ՀՀ քրեական օրենսգրքում 2003 թվականի օգոստոսի 1-ից: 2003 թվականի մարտի 25-ին ՀՀ վավերացրել է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան և կոնվենցիային կից «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի նախականխման, կանխարգելման և պատժի վերաբերյալ», ինչպես նաև «Օդով, ջրով և ցամաքով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ» արձանագրությունները:

2008 թվականի հունվարին վավերացվել է Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին ԵԽ կոնվենցիան: Կոնվենցիայի վերաբերյալ ՀՀ Եվրոպայի խորհրդին է ներկայացրել իր առաջին հաշվետու զեկույցը:

2008 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման

կարգը: Վերջինս սահմանում է համագործակցության այն համակարգը, որի միջոցով պետական կառավարման մարմիններն իրականացնում են իրենց պարտականությունները մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց իրացվունքների պաշտպանության ուղղությամբ:

2008թ. նոյեմբերին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր՝ թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոնի ստեղծման ծրագիրն իրականացնելու մասին: Այն ավարտվել է 2011 թվականի օգոստոսին: Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում դերակատարում ունեցող համապատասխան կառույցներին «Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի իրականացման, մասնավորապես՝ զոհերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմ ստեղծելու, զոհերի կարիքների ու իրավունքների պաշտպանությանն ուղղված ռազմավարություն մշակելու գործում: Ծրագիրը, համագործակցելով ՀՀ ԱՍՀՆ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության և կանանց հիմնահարցերի բաժնի հետ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

ա/ մայրաքաղաքում և բոլոր մարզերում մի քանի փուլով կազմակերպվել և անց են կացվել սեմինարներ, կլոր սեղաններ, վարժանքներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, աշխատանքային տեսչության, զբաղվածության գործակալության աշխատակիցների, տարածքային մարմինների, ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար՝ միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Մասնակիցներին ներկայացվել են ազգային և միջազգային օրենսդրությունը, թրաֆիքինգի զոհերի ուղղորդման առանձնահատկությունները, նույնացման չափորոշիչները և այլն:

բ/ Մշակվել են փաստաթղթեր՝

- թրաֆիքինգի զոհերի պաշտպանության և օգնության գործընթացի մշտադիտարկման արդյունքում նախապատրաստվել են մոնիտորինգային զեկույցներ Հայաստանում թրաֆիքինգի գործերով դատավարությունների և թրաֆիքինգի դրդապատճառների, զոհերի սոցիալ-ժողովրդագրական

պատկերի, մասնագիտացված հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների կողմից թրաֆիքինգի զոհերին տրամադրված (տրամադրվող) աջակցության վերաբերյալ,

- կատարվել է Եվրոպայի Խորհրդի թիվ 197 կոնվենցիայի և ազգային օրենսդրության համապատասխանելիության վերլուծություն,

- լրամշակվել է ազգային ուղղորդման կարգը: Ներկայումս Կարգը նորից վերանայվում է անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:

գ/ Մշակվել է մարդկանց շահագործման ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգով նախատեսված ՀՀ ԱՍՀՆ ու համագործակցող ՀԿ-ների միջև ստորագրվելիք փոխըմբռման հուշագրի մոդելային օրինակը:

դ/ Մշակվել է ուղեցույց «Պետության աջակցությունը դժվար իրավիճակներում հայտնված անձանց»:

ե/ Մշակվել են հատուկ ուղեգրերի ձևեր պետպատվերի շրջանակում զոհերի անվճար բուժօգնությունն ու սպասարկումը կազմակերպելու համար:

զ/ Կենտրոնը նախարարության և մասնագիտացված ՀԿ-ների հետ համատեղ Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպել է մեկօրյա սեմինար՝ «Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանությունը մարդկանց շահագործման դեմ պայքարի համատեքստում» թեմայով:

2009թ.-ի նոյեմբերի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով առավել խստացված պատժաչափեր են սահմանվում թրաֆիքինգի հանցագործության համար:

2009թ.-ին անց են կացվել քննարկումներ 2008թ.-ի նոյեմբերին ընդունված «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի» կիրարկման շուրջ և նախանշված խնդիրների լուծումներով առաջարկություններ ներկայացվել՝ նշյալ կարգում համապատասխան

փոփոխություններն իրականացնելու նպատակով: ՀՀ կառավարության կողմից 2010թ.-ի մարտի 11-ին ընդունվել է N 230-Ա որոշումը՝ ՀՀ կառավարության 2008թ.-ի նոյեմբերի 20-ի N 1385-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

2009թ.-ի նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով կնքվող քաղաքացիաիրավական պայմանագրով տրվող սուբսիդիայի հիմքում դրվող ծախսերը տարբերակելու կարգը հաստատելու մասին» 1358-Ն որոշումը, որով կարգավորվում են թրաֆիքինգի զոհերին վերականգնողական կենտրոններում ծառայությունների մատուցման համար պետական ֆինանսավորման հարցերը:

54. Սկսած 2010 թվականից իրականացվում է «Թրաֆիքինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնում» պետական ծրագիրը, որի շրջանակներում յուրաքանչյուր տարի աջակցություն են ստանում շուրջ 20 կին և երեխա:

Ծրագրի շրջանակներում թրաֆիքինգի զոհերին տրամադրվում է հետևյալ օգնությունը. կացարանի տրամադրում, հոգեբանական օգնություն, իրավաբանական խորհրդատվություն, աջակցություն սոցիալական ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ, այն է՝ պետական նպաստների, մասնագիտական ուսուցման և կողմնորոշման, աշխատանքի տեղավորման ծրագրեր: Հաշվետու ժամանակահատվածում երկու հոգի ստացել են բնակարաններ: Աջակցություն ստացել են նաև տուժած կանանց երեխաները: Կարևոր է նշել, որ թրաֆիքինգի ենթարկված երեխաների թիվը մեծ չէ: Աջակցության գործընթացը իրականացվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի» դրույթներին համապատասխան:

Համաձայն ստանձնած միջազգային պարտավորությունների և Ազգային ծրագրի միջոցառումների ժամանակացույցի մշակվել և ներկայացվել է թրաֆիքինգի հարցերով զբաղվող Խորհրդին "Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին միանվագ դրամական փոխհատուցման նշանակման և տրամադրման կարգը:

55. Ներկայումս ոստիկանության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը մշակվել է ԵԽ Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին թիվ 197-րդ կոնվենցիայի հիման վրա և նպատակ ունի առավել հստակ կանոնակարգել զոհերի կարգավիճակը և նրանց տրամադրվող հետագա աջակցությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հիմք ընդունելով 2005 թվականին ստորագրված <<Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցների մասին>> Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, մշակել և միջգերատեսչական շրջանառության մեջ է դրել Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին միանվագ դրամական փոխհատուցման նշանակման և տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը:

56. Հանրապետությունում գործում են երկու ապաստարաններ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ, ուր ուղղորդում են թրաֆիքինգի զոհերը աջակցություն ստանալու համար: Երկու ապաստարաններն էլ գտնվում են Երևանում: Դրանցից մեկի աշխատանքները ղեկավարում է ԱՄՔՈՐ հասարակական կազմակերպությունը, որը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարացերի նախարարության հետ:

57. Հարկ է նշել, որ ՀՀ-ում մարմնավաճառությամբ զբաղվող, ինչպես անչափահասների, այնպես էլ չափահաս կանանց համար գործում են վերականգնողական կենտրոններ:

ՀՀ ոստիկանությունը սերտ համագործակցում է կանանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են կանանց վերաինտեգրման վերականգնողական խնդիրներով: Մարմնավաճառաությամբ զբաղվող կանանց հետ աշխատում են հոգեբանները, սոցիալական աշխատողները, նրանց առաջարկվում են աշխատատեղեր, մատուցվում անհրաժեշտ ծառայություններ: ՀՀ ոստիկանության աշխատակիցներն այս ուղղությամբ իրականացնում են ամենօրյա կանխարգելիչ աշխատանքներ:

Հոդված 7

58. ՀՀ Սահմանադրության քվեարկելու և ընտրելու նորմը գործում է և անմիջականորեն և իր անուղղակի արտացոլումն է գտել ՀՀ օրենսդրության մեջ:

2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ՀՀ նոր Ընտրական օրենգրքում սահմանվել են գենդերային զգայուն քվոտաներ, որոնք ուղղված են օրենսդիր իշխանությունում կանանց ներկայացուցչության մեծացմանը: Մասնավորապես, 108-րդ հոդվածը սահմանում է «... Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը: Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկվում է 25 թեկնածու: Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը չի կարող գերազանցել Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվի համար սույն օրենսգրքով սահմանված թվի եռապատիկը: Կուսակցության ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այլ կուսակցության անդամ չհանդիսացող անձինք»:

2012 թվականի մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքներով հինգերորդ գումարման ԱԺ-ի կազմում կանանց թիվն ավելացել է հասնելով 14-ի: Եթե ներկայացնենք բաշխումը ըստ խմբակցությունների, ապա ՀՀԿ խմբակցության կազմում 69 պատգամավոր է, որոնցից 9-ը կին են, ԲՀԿ խմբակցության կազմում 37, այդ թվում 2 կին, Հայ ազգային կոնգրեսի խմբակցություն - 7 պատգամավոր՝ 1 կին, Օրինաց երկիր խմբակցություն - վեց պատգամավոր՝ 1 կին, Ժառանգություն խմբակցություն 5 պատգամավոր՝ 1 կին, ՀՅԴ խմբակցություն հինգ պատգամավոր՝ կին չկա: Համեմատելով խմբակցությունների կազմը նախորդ գումարման հետ նշենք, որ ՀՀԿ խմբակցությունը ակնհայտորեն ավելացրել է կանանց թիվը իր կազմում ՝ անցյալ գումարման 3,1 տոկոսից մինչեւ այսօրվա 13%-ը : Ընդ որում ՀՀԿ ներկայացնող կին պատգամավորը նաև ԱԺ փոխնախագահ է:

59. ՀՀ կառավարության կազմում ընդգրկված են երկու կին նախարար որոնք ղեկավարում են ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարությունները: Կին փոխնախարարներ են աշխատում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (երկու փոխնախարար), ինչպես նաև կրթության և գիտության, մշակույթի և քաղաքաշինության նախարարություններում:

60. Հասարակական քաղաքական միավորումների ստեղծումը և դրանց գործունեության կարգը սահմանվում են 1991թ. ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», 2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» և 2003 թվականի հուլիսի 3-ին ընդունված «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքներով: Միավորումների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2001 թվականի ապրիլի 3-ին ընդունված «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով և վերը նշված օրենքներով:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքները և շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն կազմակերպությունը կարող է ստեղծվել հիմնադիրների կողմից հիմնադրվելու կամ հասարակական միավորման որևէ կազմակերպական-իրավական տեսակ ունեցող կազմակերպության (կազմակերպությունների) վերակազմակերպման հետևանքով: Կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Այս պահի դրությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցվել են 4012

հասարակական կազմակերպություններ, որոնցից կանանց կողմից գրանցված է 1023-ը: Նրանցից շատերը հիմնադրվել են ՀՀ անկախ պետականության ձեռքբերումից անմիջապես հետո և մեծ ներդրում ունեն ՀՀ-ում քաղաքացիական հասարակարգի զարգացման գործում:

61. 2013 թվականի մայիս-հուլիս ամիսներին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ կազմակերպել են հանրապետության բոլոր մարզերում հանդիպումներ 2010 թվականից UNFPA-ի աջակցությամբ ստեղծված և այժմ մարզպետարաններում գործող գենդերային հանձնաժողովների անդամների հետ՝ նրանց կարիքները, թե՛ գենդերային գիտելիքների, թե՛ հմտությունների առումով, գնահատելու նպատակով: Հանդիպումների արդյունքները ամփոփվել են և ներկայումս, ծրագիրը, որն իրականացվում է UNICEF-ի օժանդակությամբ, անցել է երկրորդ փուլ, այն է՝ համապատասխան մոդուլների մշակում և դասընթացների կազմակերպում:
UNFPA-ի աձակցությամբ ներկայումս մշակվում է բռնության ենթարկված անձանց նախնական նույնականացման մեխանիզմների և դրա հիման վրա սոցիալական աշխատողների (դեպք վարողների) համար վերապատրաստման մոդուլները:
62. Վարչապետի կողմից ղեկավարվող Կանանց խորհրդի նախաձեռնությամբ արդեն երեք տարի է անց է կացվում «Լավագույն կին գործարար» և «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունը: Կառավարության ղեկավարը պատվոգրեր է հանձնում տարբեր անվանակարգերում անցկացված մրցույթների հաղթողներին: «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությանը հաղթող ճանաչված համայնքներն ընտրվում են ըստ կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչների մեթոդական ուղեցույցի, որը մշակվել է ՀՀ տարածքային կառավարության կողմից՝ UNFPA-ի աջակցությամբ: Հայաստանում կանանց ձեռնարկատիրական գործունեությունը և նախաձեռնողականությունը խրախուսելու, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումների գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով հատուկ մրցանակներ են հանձնվել նաև միջազգային կազմակերպությունների՝ ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի,

ԵԱՀԿ-ի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Ասիական զարգացման բանկի կողմից: Իսկ «Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում», «Լավագույն հեռուստատեսային ռեպորտաժ», «Լավագույն ռադիոռեպորտաժ» և «Լավագույն տպագիր նյութ» անվանակարգերում հայտարարված մրցույթի նպատակը հաջողակ գործարար կանանց հետաքրքիր պատմությունների լուսաբանումն է:

**<u>Հոդված 8</u>**

63. Հայաստանի Հանրապետությունը լայնորեն կիրառում է միջազգային տարբեր հանդիպումների և համաժողովների աշխատանքներին կին մասնագետների մասնակցությունը, իսկ Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններում կանայք ավելի շատ են քան տղամարդիկ:
Միևնույն ժամանակ Հայաստանի արտգործնախարարությունը հետևողական է կին-դիվանագետների քանակի ավելացման խնդրում: Այսպես օրինակ, եթե 2010 թվականին դիվանագիտական դպրոցում սովորում էին 21 տղա և 6 աղջիկ, ապա 2012 թվականին դպրոցն ավարտել են 14 տղա և 13 աղջիկ: Հայաստանի դիվանագիտական ծառայությունում այսօր աշխատում են երեք կին դեսպան:
Զեկույցին կցված աղյուսակում ներկայացված է կին դիվանագետների քանակը 2012 թվականի դրությամբ:

**<u>Հոդված 9</u>**

64. 1995 թվականի նոյեմբերի 28-ի «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի (Օրենք) 6-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում, ինչպես նաև ամուսիններից մեկի քաղաքացիության փոխելը ինքնին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխմանը:

Օրենքով սահմանվում են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ իրենց երեխաների քաղաքացիության ընտրության

առնչությամբ: Մասնավորապես՝ Օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ապա նրանց երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

65. 1995 թվականի նոյեմբերի 28-ի «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի (Օրենք) 6-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում, ինչպես նաև ամուսիններից մեկի քաղաքացիության փոխելը ինքնին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխմանը:

Օրենքով սահմանվում են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ իրենց երեխաների քաղաքացիության ընտրության առնչությամբ: Մասնավորապես՝ Օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե առկա է

ծնողների գրավոր համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ապա նրանց երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

<u>Հոդված 10</u>

66. ՀՀ Սահմանադրությունն իր հոդված 39-ում սահմանում է, որ Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները որոշվում են օրենքով: Ուսումնական հաստատությունների ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով

սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով ֆինանսական եւ այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին եւ դրանցում սովորողներին:

67. Ինչ վերաբերում է Կոմիտեի 30-31 կետերում տեղ գտած հանձնարարականներին, ապա պետք է նշել, որ ՀՀ օրենսդրական դաշտն ապահովում է կրթության հավասար մատչելիություն, սակայն, այնուամենայնիվ, կրթության տարբեր մակարդակներում սովորողների շրջանում արձանագրվում են դուրս մնացողներ: Պետք է նշել, որ այս խմբի սովորողների թվաքանակը զգալի չէ: Մասնավորապես, հանրակրթության ոլորտում դպրոցից դուրս եկած աշակերտների խմբում առավել մեծ թիվ են կազմում 15 և 16 տարեկանները , իսկ դպրոցը թողնելու հիմնական պատճառներից են՝ «ցանկության բացակայությունը» և «սոցիալ-տնտեսական վատ պայմանները»: Միաժամանակ նշենք, որ դպրոցից դուրս են գալիս հիմնականում 9-րդ դասարանն ավարտած և սոցիալապես անապահով ու բազմանդամ ընտանիքների տղա երեխաները: Դա պայմանավորված է նաև նրանով, որ 9-ամյա (հիմնական) կրթությունը պարտադիր է բոլորի համար և այն ամրագրված է «Կրթության մասին» ՀՀ օրենքով:

Հանրակրթական դպրոցի 8-11-րդ դասարաններում դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ: Համապատասխան վերապատրաստում են անցնում առարկան դասավանդող ուսուցիչները: Դասընթացը նպաստում է սովորողների մոտ առողջ ապրելակերպի և ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ հանրակրթության ոլորտում իրականացվում է «Հանդուրժողականություն» ծրագիրը: Այդ նպատակով մշակվել է առարկան դասավանդող ուսուցչի ձեռնարկը: Ծրագիրը սովորողներին ուսուցանում է հանդուրժողականություն, համագործակցություն, նպաստում է կոնֆլիկտների լուծմանը և այլն:

68. Առաջադիմության վերաբերյալ պետք է նշել, որ իրենց լավ առաջադիմությամբ կանայք (աղջիկները) չեն զիջում տղամարդկանց

(տղաներին)։ Դեռ ավելին, ուսման նկատմամբ նրանք ցուցաբերում են առավել մեծ հետաքրքրություն և պատասխանատվություն։ Այդ են վկայում հանրակրթական դպրոցի սովորողների համեմատական ցուցանիշները։

Վերջին տարիներին ավագ դպրոցում սովորողների շրջանում մեծացել է աղջիկների թիվը։ Հիմնական դպրոցն ավարտելուց հետո առավել հաճախ, տարբեր մոտիվացիաներով, դպրոցը թողնում են տղաները, որոնք շարունակում են ուսումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կամ անցնում են աշխատանքի։

Միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ ուսումը թողած կամ դուրս մնացած սովորողների մեջ կանայք կազմում են 25,6 %, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում այդ ցուցանիշը կազմում է 26%։ Բնականաբար այս խմբերում առավել մեծ թիվ կազմում են վճարովի համակարգի սովորողները։ Առավել հաճախ ուսանողները դուրս են մնում կամ թողնում ուսումը անբավարար առաջադիմության պատճառով կամ էլ սոցիալական պայմաններից ելնելով։

69. Հարկ է նշել, որ Հայաստանում կրթական տարբեր մակարդակներում սովորողների ընդգրկվածության առումով սեռային որևէ խնդրականություն չկա և այս առումով ընդգրկվածության հիմնախնդիրներն, ըստ էության, բացակայում են։ Սակայն որոշ ցուցանիշների վերլուծությունը փաստում է, որ, թե՛ հանրակրթության, թե՛ մասնագիտական կրթության մեջ ընդգրկվածների շրջանում որոշ առումով տղամարդիկ ավելի խոցելի են և կրթության համակարգից դուրս մնալու առումով ավելի վտանգված։

70. Վերջին տարիներին բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կանանց առավել մեծ ընդգրկվածության ցուցանիշ գրանցվում է տնտեսագիտության, իրավագիտության, առողջապահության, մանկավարժության և արվեստի մասնագիտական խմբերում։ Թերևս մանկավարժության, արվեստի և առողջապահության ոլորտներում կանանց թվի գերակշռությունը ավանդական է, սակայն ներկայումս կանանց կողմից նախապատվելի են դարձել նաև տնտեսագիտության, կիրառական մաթեմատիկայի և իրավագիտության ոլորտները։ Դա պայմանավորված է և՛ աշխատաշուկայում նշված մասնագիտությունների մեծ պահանջարկով, և՛ հասարակության մեջ նոր հարաբերությունների ձևավորմամբ, ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց ու տղամարդկանց հավասարաչափ մասնակցության անհրաժեշտությամբ։

«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքով բարձրագույն ուսումնական հաստատություններում ղեկավար պաշտոնները զբաղեցվում են մրցութային կարգով, որին հավասարապես մասնակցում են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ:

«Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրով» նախատեսված՝ 2011 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները. հանրակրթական դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը: Հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար մշակվել է «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմայով ներդիրը, որը 2012 թվականից կներառվի «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում: Սովորողների մոտ մասնագիտական կողմնորոշման հարցերում իրազեկվածության բարձրացում՝ ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը: Երաշխավորվել է հանրակրթական դպրոցներում դասղեկների համար նախատեսված «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ» օժանդակ ձեռնարկը:

«Գենդերային բռնության դեմ պայքարի 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրով», գենդերային բռնության կանխարգելման նպատակով նախատեսվում է հանրակրթական դպրոցներում և մասնագիտական ուսումնական հաստատություններում կազմակերպել սովորողների համար գենդերային բռնության վերաբերյալ ուսուցողական միջոցառումներ, ուսուցիչների և բուհերի դասախոսների համար գենդերային բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով ևս կազմակերպվելու են ուսուցողական միջոցառումներ:

Ներկայումս կրթության ոլորտում իրականացվում են բովանդակային բարեփոխումներ, որոնք միտված են նաև կրթության ժողովրդավարացմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը: Մասնավորապես, հանրակրթական դպրոցներում դասավանդվում է «Հասարակագիտություն» առարկան, որը նաև ներառում է թեմաներ կնոջ և տղամարդու իրավահավասարության, հասարակության մեջ նրանց

ունեցած դերի վերաբերյալ: Առարկան օգնում է սովորողներին փոխել կարծրատիպերը, ինչպես նաև խրախուսել, որ նրանք դառնան ակտիվ քաղաքացիներ:

Միաժամանակ, համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի (ԱԺ,10.07.2009թ.,ՀՕ-160-Ն) և 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշմամբ հաստատված՝ «Հանրակրթության պետական չափորոշչի», լրամշակվել են հանրակրթական դպրոցի հասարակագիտական և բնագիտական առարկաների չափորոշիչներն ու ծրագրերը, որոնցում ներառվել են գենդերային հավասարությունը և կանանց իրավունքների պաշտպանությունն ամրագրող չափորոշիչներ, ինչպես օրինակ՝ տարրական դպրոցում՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի, միջին և ավագ դպրոցներում՝ «Հասարակագիտություն» առարկաների ծրագրերում: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի գրասենյակի օժանդակությամբ վերանայվել են հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերն ու դասագրքերը՝ մարդու իրավունքների տեսանկյունից և, նաև արված առաջարկությունների հիման վրա, բեռնաթափվել և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով հաստատվել են հիմնական դպրոցի առարկայական նոր չափորոշիչներն ու ծրագրերը: Այս գործընթացը միտված է սովորողներին տալ ամբողջական գիտելիքներ հասարակության և անհատի փոխհարաբերությունների մասին, դաստիարակել ազգային և համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, ով քաջ գիտակցում է իր իրավունքներն ու պարտականությունները, գնահատում է ժողովրդավարական արժեքները:

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվում է «Ծնողների կրթություն» ծրագիրը, որի շրջանակներում մեթոդական աջակցություն է ցույց տրվում նախադպրոցական տարիքի երեխաների ծնողներին՝ ընտանիքներում երեխաների դաստիարակության գործընթացը ճիշտ կազմակերպելու նպատակով: Ծնողների համար նախատեսված ձեռնարկները նրանց տալիս են մանկավարժական ու առողջապահական գիտելիքներ: Ծրագիրն օգնում է նաև կանանց ու տղամարդկանց՝ ճիշտ գիտակցելու երեխաների դաստիարակության գործում իրենց մասնակցությունը, ճանաչելու ընդհանուր պատասխանատվությունը, իրավունքներն ու պարտականությունները:

## Ասպիրանտուրա ընդունվածների, սովորողների և ավարտածների թվաքանակի շարժը, 2007-2012թթ.

*մարդ*

| | Ընդամենը | | | | | | նրանցից՝ կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Ընդունվել են ասպիրանտուրա | 371 | 382 | 273 | 275 | 368 | 373 | 157 | 140 | 52 | 110 | 160 | 142 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| գիտական հիմնարկներում | 145 | 99 | 95 | 65 | 52 | 55 | 68 | 32 | 28 | 4 | 13 | 14 |
| նրանցից՝ առկա ուսուցմամբ | 78 | 59 | 43 | 44 | 35 | 34 | 15 | 6 | 7 | - | 1 | 3 |
| բարձրագույն ուսումնական հաստատություննեում | 226 | 283 | 178 | 210 | 316 | 318 | 89 | 108 | 24 | 106 | 147 | 128 |
| նրանցից՝ առկա ուսուցմամբ | 110 | 157 | 95 | 133 | 138 | 140 | 7 | 15 | 13 | 26 | 21 | 19 |
| Ասպիրանտների թվաքանակը | 1 414 | 1 320 | 1 393 | 1 232 | 1 054 | 1 104 | 606 | 568 | 541 | 477 | 432 | 463 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| գիտական հիմնարկներում | 451 | 350 | 411 | 321 | 196 | 190 | 195 | 120 | 118 | 101 | 44 | 42 |
| նրանցից՝ առկա ուսուցմամբ | 246 | 155 | 27 | 221 | 123 | 125 | 47 | 11 | 12 | 10 | 4 | 5 |
| բարձրագույն ուսումնական հաստատություննեում | 963 | 970 | 982 | 911 | 858 | 914 | 411 | 448 | 423 | 376 | 388 | 421 |
| նրանցից՝ առկա ուսուցմամբ | 409 | 405 | 455 | 437 | 388 | 388 | 19 | 42 | 45 | 54 | 55 | 55 |
| Ավարտել են ասպիրանտուրա | 343 | 425 | 597 | 440 | 370 | 368 | 101 | 124 | 218 | 182 | 113 | 106 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| գիտական հիմնարկներում | 98 | 143 | 140 | 98 | 67 | 56 | 36 | 35 | 32 | 26 | 18 | 14 |
| նրանցից՝ առկա ուսուցմամբ | 56 | 85 | 43 | 29 | 40 | 38 | 7 | 7 | 5 | 1 | 5 | 5 |
| բարձրագույն ուսումնական հաստատություննեում | 245 | 282 | 457 | 342 | 303 | 312 | 65 | 89 | 186 | 156 | 95 | 92 |
| նրանցից՝ առկա ուսուցմամբ | 156 | 145 | 95 | 111 | 174 | 173 | 22 | 9 | 15 | 17 | 13 | 10 |

**Ասպիրանտների թվաքանակն ըստ ուսուցման համակարգի և ըստ մասնագիտության, 2007-2012թթ.**
**ա) ընդամենը**

*մարդ*

| | Ընդամենը | | | | | | նրանցից՝ կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 200 8 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Ֆիզիկամաթեմատիկական | 126 | 135 | 169 | 165 | 137 | 160 | 26 | 29 | 43 | 42 | 42 | 55 |
| Քիմիական | 33 | 17 | 22 | 21 | 8 | 8 | 15 | 10 | 8 | 6 | 3 | 2 |
| Կենսաբանական | 41 | 49 | 85 | 79 | 50 | 54 | 22 | 30 | 40 | 26 | 22 | 28 |
| Երկրաբանական | 30 | 24 | 33 | 29 | 25 | 21 | 9 | 7 | 8 | 5 | 2 | 4 |
| Տեխնիկական | 222 | 189 | 189 | 160 | 182 | 190 | 67 | 50 | 49 | 45 | 40 | 35 |
| Գյուղատնտեսական | 34 | 33 | 18 | 17 | 14 | 10 | 14 | 17 | 8 | 6 | 5 | 3 |
| Պատմական | 49 | 43 | 54 | 57 | 37 | 39 | 19 | 15 | 18 | 21 | 17 | 19 |
| Տնտեսագիտական | 434 | 389 | 332 | 294 | 236 | 218 | 181 | 174 | 152 | 129 | 122 | 113 |
| Փիլիսոփայական | 16 | 16 | 16 | 17 | 22 | 34 | 5 | 11 | - | 13 | 13 | 24 |
| Բանասիրական | 121 | 116 | 98 | 92 | 64 | 67 | 82 | 76 | 63 | 71 | 29 | 42 |
| Աշխարհագրական | 5 | - | - | - | 3 | 1 | 3 | - | - | - | 2 | - |
| Իրավաբանական | 56 | 74 | 104 | 89 | 78 | 89 | 21 | 33 | 33 | 31 | 28 | 27 |

| | Ընդամենը | | | | | | նրանցից՝ կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Մանկավարժական | 30 | 34 | 32 | 29 | 18 | 15 | 20 | 22 | 24 | 12 | 11 | 11 |
| Բժշկական | 63 | 51 | 44 | 38 | 28 | 34 | 21 | 18 | 8 | 13 | 8 | 12 |
| Դեղագործական | - | 4 | 2 | 3 | 4 | 2 | - | - | - | 2 | 2 | 1 |
| Անասնաբուժական | 25 | 15 | 8 | 5 | 2 | 4 | 12 | 6 | 4 | 3 | 2 | 2 |
| Արվեստագիտական | 57 | 53 | 47 | 33 | 24 | 25 | 29 | 28 | 33 | 22 | 20 | 12 |
| Ճարտարապետական | 18 | 16 | 31 | 30 | 16 | 38 | 13 | 8 | 11 | 8 | 8 | 17 |
| Հոգեբանական | 15 | 12 | 29 | 19 | 25 | 21 | 13 | 9 | 12 | 7 | 22 | 18 |
| Սոցիոլոգիական | 19 | 16 | 20 | - | 10 | 11 | 16 | 13 | 8 | - | 7 | 7 |
| Քաղաքական | 20 | 34 | 60 | 47 | 64 | 61 | 18 | 12 | 19 | 12 | 23 | 30 |
| Լրագրություն | - | - | - | 8 | 7 | 2 | - | - | - | 3 | 4 | 1 |
| **Ընդամենը** | **1414** | **1320** | **1393** | **1232** | **1054** | **1104** | **606** | **568** | **541** | **477** | **432** | **463** |

**բ) անվճար ուսուցմամբ**

*մարդ*

| | Ընդամենը | | | | | | նրանցից՝ կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Ֆիզիկամաթեմատիկական | 124 | 134 | 160 | 157 | 136 | 155 | 24 | 28 | 41 | 40 | 41 | 52 |
| Քիմիական | 32 | 15 | 12 | 10 | 8 | 8 | 14 | 8 | 6 | 4 | 3 | 2 |
| Կենսաբանական | 41 | 49 | 51 | 49 | 50 | 54 | 22 | 30 | 32 | 22 | 22 | 28 |
| Երկրաբանական | 30 | 24 | 24 | 21 | 19 | 21 | 9 | 7 | 7 | 3 | 2 | 4 |
| Տեխնիկական | 213 | 185 | 178 | 154 | 176 | 187 | 63 | 49 | 49 | 45 | 40 | 35 |
| Գյուղատնտեսական | 31 | 26 | 15 | 14 | 12 | 10 | 12 | 11 | 6 | 4 | 3 | 3 |
| Պատմական | 47 | 38 | 37 | 43 | 36 | 39 | 18 | 13 | 15 | 17 | 17 | 19 |
| Տնտեսագիտական | 289 | 252 | 226 | 235 | 206 | 212 | 77 | 82 | 82 | 78 | 100 | 110 |
| Փիլիսոփայական | 16 | 7 | 14 | 17 | 22 | 34 | 5 | 7 | - | 13 | 13 | 24 |
| Բանասիրական | 108 | 93 | 79 | 67 | 64 | 66 | 74 | 60 | 50 | 56 | 29 | 41 |
| Աշխարհագրական | - | - | - | - | 3 | 1 | - | - | - | - | 2 | - |
| Իրավաբանական | 51 | 65 | 75 | 65 | 76 | 87 | 18 | 26 | 24 | 21 | 27 | 25 |
| Մանկավարժական | 23 | 24 | 25 | 27 | 18 | 13 | 13 | 12 | 17 | 10 | 11 | 9 |
| Բժշկական | 63 | 50 | 43 | 36 | 28 | 34 | 21 | 18 | 8 | 13 | 8 | 12 |
| Դեղագործական | - | 4 | 2 | 3 | 4 | 2 | - | - | - | 2 | 2 | 1 |
| Անասնաբուժական | 14 | 10 | 5 | 2 | 2 | 4 | 8 | 5 | 3 | 2 | 2 | 2 |
| Արվեստագիտական | 56 | 53 | 40 | 31 | 23 | 20 | 28 | 28 | 26 | 21 | 19 | 10 |
| Ճարտարապետական | 18 | 16 | 31 | 28 | 16 | 38 | 13 | 8 | 11 | 8 | 8 | 17 |
| Հոգեբանական | 13 | 11 | 14 | 13 | 23 | 21 | 11 | 8 | 11 | 2 | 20 | 18 |
| Սոցիոլոգիական | 17 | 15 | 10 | - | 10 | 11 | 14 | 12 | 8 | - | 7 | 7 |
| Քաղաքական | 17 | 32 | 56 | 44 | 63 | 60 | 16 | 10 | 18 | 11 | 23 | 30 |
| Լրագրություն | - | - | - | 7 | 7 | 2 | - | - | - | 2 | 4 | 1 |
| **Ընդամենը** | **1203** | **1103** | **1097** | **1023** | **1002** | **1079** | **460** | **422** | **414** | **374** | **403** | **450** |

**գ) վճարովի ուսուցմամբ**

*մարդ*

| | Ընդամենը | | | | | | նրանցից՝ կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Ֆիզիկամաթեմատիկական | 2 | 1 | 9 | 8 | 1 | 5 | 2 | 1 | 2 | 2 | 1 | 3 |
| Քիմիական | 1 | 2 | 10 | 11 | - | - | 1 | 2 | 2 | 2 | - | - |

| | Ընդամենը | | | | | | նրանցից` կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 200 8 | 200 9 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 200 8 | 200 9 | 2010 | 2011 | 2012 |
| Կենսաբանական | - | - | 34 | 30 | - | - | - | - | 8 | 4 | - | - |
| Երկրաբանական | - | - | 9 | 8 | 6 | - | - | - | 1 | 2 | - | - |
| Տեխնիկական | 9 | 4 | 11 | 6 | 6 | 3 | 4 | 1 | - | - | - | - |
| Գյուղատնտեսական | 3 | 7 | 3 | 3 | 2 | - | 2 | 6 | 2 | 2 | 2 | - |
| Պատմական | 2 | 5 | 17 | 14 | 1 | - | 1 | 2 | 3 | 4 | - | - |
| Տնտեսագիտական | 145 | 137 | 106 | 59 | 30 | 6 | 104 | 92 | 70 | 51 | 22 | 3 |
| Փիլիսոփայական | - | 9 | 2 | - | - | - | - | 4 | - | - | - | - |
| Բանասիրական | 13 | 23 | 19 | 25 | - | 1 | 8 | 16 | 13 | 15 | - | 1 |
| Աշխարհագրական | 5 | - | - | - | - | - | 3 | - | - | - | - | - |
| Իրավաբանական | 5 | 9 | 29 | 24 | 2 | 2 | 3 | 7 | 9 | 10 | 1 | 2 |
| Մանկավարժական | 7 | 10 | 7 | 2 | - | 2 | 7 | 10 | 7 | 2 | - | 2 |
| Բժշկական | - | 1 | 1 | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| Դեղագործական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Անասնաբուժական | 11 | 5 | 3 | 3 | - | - | 4 | 1 | 1 | 1 | - | - |
| Արվեստագիտական | 1 | - | 7 | 2 | 1 | 5 | 1 | - | 7 | 1 | 1 | 2 |
| Ճարտարապետական | - | - | - | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| Հոգեբանական | 2 | 1 | 15 | 6 | 2 | - | 2 | 1 | 1 | 5 | 2 | - |
| Սոցիոլոգիական | 2 | 1 | 10 | - | - | - | 2 | 1 | - | - | - | - |
| Քաղաքական | 3 | 2 | 4 | 3 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | - | - |
| Լրագրություն | - | - | - | 1 | - | - | - | - | - | 1 | - | - |
| **Ընդամենը** | **211** | **217** | **296** | **209** | **52** | **25** | **146** | **146** | **127** | **103** | **29** | **13** |

**Դոկտորանտուրայում սովորողների թվաքանակն ըստ ուսուցման համակարգի և ըստ մասնագիտության, 2007-2012թթ.**

## ա) ընդամենը

*մարդ*

| | Ընդամենը | | | | | | նրանցից` կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Ֆիզիկամաթեմատիկական | - | 1 | 1 | - | 1 | 1 | - | - | - | - | - | - |
| Կենսաբանական | 1 | - | - | - | - | 4 | 1 | - | - | - | - | 1 |
| Երկրաբանական | - | 3 | - | 1 | 1 | 1 | - | - | - | - | - | - |
| Տեխնիկական | 7 | 9 | 5 | 10 | 10 | 8 | - | 1 | 1 | - | 1 | 1 |
| Գյուղատնտեսական | - | 6 | 1 | - | - | - | - | - | - | - | - | - |
| Բանասիրական | - | 1 | 4 | 2 | - | 2 | - | 1 | 3 | 1 | - | - |
| Մանկավարժական | - | 2 | 2 | 2 | 2 | 1 | - | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Բժշկական | 45 | 48 | 41 | 37 | 25 | 24 | 7 | 14 | 14 | 14 | 9 | 9 |
| Պատմական | - | - | 1 | 1 | 1 | 1 | - | - | - | - | - | - |
| Անասնաբուժական | - | 1 | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Տնտեսագիտական | 4 | - | - | - | 1 | 2 | - | - | - | - | - | - |
| Իրավաբանական | 1 | - | - | - | 2 | 1 | 1 | - | - | - | 1 | - |
| Ճարտարապետական | 1 | 1 | 1 | 2 | 2 | 6 | - | - | - | - | - | - |
| Հոգեբանական | 1 | - | - | - | - | - | 1 | - | - | - | - | - |
| Քաղաքական | - | - | - | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | **60** | **72** | **56** | **57** | **45** | **51** | **10** | **17** | **19** | **16** | **12** | **12** |

## բ) անվճար ուսուցմամբ

*մարդ*

| | Ընդամենը | | | | | | նրանցից` կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Ֆիզիկամաթեմատիկական | - | 1 | 1 | - | 1 | 1 | - | - | - | - | - | - |
| Կենսաբանական | 1 | - | - | - | - | 4 | 1 | - | - | - | - | 1 |
| Երկրաբանական | - | 3 | - | 1 | 1 | 1 | - | - | - | - | - | - |
| Տեխնիկական | 7 | 9 | 5 | 10 | 10 | 8 | - | 1 | 1 | - | 1 | 1 |
| Գյուղատնտեսական | - | 6 | 1 | - | - | - | - | - | - | - | - | - |
| Բանասիրական | - | 1 | 4 | 2 | - | 2 | - | 1 | 3 | 1 | - | - |
| Մանկավարժական | - | 2 | 2 | 2 | 2 | 1 | - | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Բժշկական | 42 | 46 | 39 | 35 | 23 | 24 | 7 | 14 | 12 | 12 | 7 | 9 |
| Պատմական | - | - | 1 | 1 | 1 | 1 | - | - | - | - | - | - |
| Անասնաբուժական | - | 1 | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Տնտեսագիտական | 4 | - | - | - | - | 2 | - | - | - | - | - | - |
| Իրավաբանական | 1 | - | - | - | 2 | 1 | 1 | - | - | - | 1 | - |
| Ճարտարապետական | 1 | 1 | 1 | 2 | 2 | 6 | - | - | - | - | - | - |

| | Ընդամենը | | | | | | նրանցից՝ կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Հոգեբանական | 1 | - | - | - | - | - | 1 | - | - | - | - | - |
| Քաղաքական | - | - | - | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | **57** | **70** | **54** | **55** | **42** | **51** | **10** | **17** | **17** | **14** | **10** | **12** |

**գ) վճարովի ուսուցմամբ**

*մարդ*

| | Ընդամենը | | | | | | նրանցից՝ կանայք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
| Ֆիզիկամաթեմատիկական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Կենսաբանական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Երկրաբանական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Տեխնիկական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Գյուղատնտեսական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Բանասիրական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Մանկավարժական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Բժշկական | 3 | 2 | 2 | 2 | 2 | - | - | - | 2 | 2 | 2 | - |
| Պատմական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Անասնաբուժական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Տնտեսագիտական | - | - | - | - | 1 | - | - | - | - | - | - | - |
| Իրավաբանական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Ճարտարապետական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Հոգեբանական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Քաղաքական | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | **3** | **2** | **2** | **2** | **3** | **-** | **-** | **-** | **2** | **2** | **2** | **-** |

**Հանրակրթական տարրական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, 2007-2012թթ.**

%

| | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---|---|---|---|
| 2007 | 93.2 | 93.5 | 92.9 |
| 2008 | 95.5 | 96.2 | 94.9 |
| 2009 | 96.1 | 96.3 | 95.9 |
| 2010 | 96.8 | 97.4 | 96.4 |
| 2011 | 99.0 | 99.6 | 98.4 |
| 2012 | 95.2 | 96.0 | 94.5 |

**Հանրակրթական տարրական դպրոցներում աշակերտների «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշն ըստ սեռի, 2008-2012թթ.**

%

| | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---|---|---|---|
| 2008 | 100.0 | 100.3 | 99.7 |
| 2009 | 103.1 | 103.5 | 102.8 |
| 2010 | 94.8 | 94.9 | 94.7 |
| 2011 | 98.5 | 98.9 | 98.1 |
| 2012 | 93.4 | 93.9 | 93.0 |

**Հանրակրթական հիմնական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, 2007-2012թթ.**

%

| | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---|---|---|---|
| 2007 | 95.9 | 96.0 | 95.9 |
| 2008 | 93.5 | 94.0 | 93.0 |
| 2009 | 92.1 | 92.7 | 91.6 |
| 2010 | 91.6 | 92.1 | 91.1 |
| 2011 | 91.8 | 92.2 | 91.5 |
| 2012 | 94.8 | 95.6 | 94.0 |

**Հանրակրթական հիմնական դպրոցներում աշակերտների «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշն ըստ սեռի, 2010-2012թթ.**

%

| | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---|---|---|---|
| 2010 | 93.1 | 93.6 | 92.7 |
| 2011 | 93.3 | 93.8 | 93.0 |
| 2012 | 97.0 | 97.8 | 96.2 |

**Հանրակրթական ավագ դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, 2007-2012թթ.**

%

| | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---|---|---|---|
| 2007 | 82.9 | 88.7 | 77.4 |
| 2008 | 81.9 | 86.0 | 78.1 |
| 2009 | 83.9 | 88.6 | 79.4 |
| 2010 | 84.4 | 90.9 | 78.4 |
| 2011 | 72.8 | 79.5 | 66.5 |
| 2012 | 74.1 | 81.5 | 67.4 |

**Հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, 2007-2012թթ.**

%

| | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---|---|---|---|
| 2007 | 89.2 | 90.4 | 88.2 |
| 2008 | 90.8 | 92.1 | 89.6 |
| 2009 | 90.2 | 91.7 | 88.9 |
| 2010 | 90.1 | 91.8 | 88.6 |
| 2011 | 86.3 | 88.5 | 84.4 |
| 2012 | 89.2 | 91.7 | 86.9 |

**Հանրակրթական դպրոցներում գենդերային հավասարության ցուցանիշն ըստ հանրակրթական ծրագրերի մակարդակի (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը), 2007-2012թթ.**

| | Տարրական դպրոց | Հիմնական դպրոց | Ավագ դպրոց | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 2007 | 1.01 | 1.00 | 1.15 | 1.02 |
| 2008 | 1.01 | 1.01 | 1.10 | 1.03 |
| 2009 | 1.00 | 1.01 | 1.12 | 1.03 |
| 2010 | 1.01 | 1.01 | 1.16 | 1.04 |
| 2011 | 1.01 | 1.01 | 1.20 | 1.05 |
| 2012 | 1.02 | 1.02 | 1.21 | 1.06 |

**Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի և գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը), 2007-2012թթ.**

| | Համախառն ընդգրկվածության ցուցանիշը, % | | | Գենդերային հավասարության ցուցանիշը |
|---|---|---|---|---|
| | ընդամենը | կանայք | տղամարդիկ | |
| 2007 | 1.7 | 0.9 | 2.4 | 0.38 |
| 2008 | 1.9 | 1.1 | 2.6 | 0.42 |
| 2009 | 2.5 | 1.3 | 3.7 | 0.35 |
| 2010 | 3.1 | 1.6 | 4.5 | 0.36 |
| 2011 | 2.9 | 1.4 | 4.3 | 0.33 |
| 2012 | 4.1 | 2.3 | 5.8 | 0.40 |

**Միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի և գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը), 2007-2012թթ.**

| | Համախառն ընդգրկվածության ցուցանիշը, % | | | Գենդերային հավասարության ցուցանիշը |
|---|---|---|---|---|
| | ընդամենը | կանայք | տղամարդիկ | |
| 2007 | 8.2 | 10.9 | 5.6 | 1.95 |
| 2008 | 8.6 | 11.3 | 6.0 | 1.88 |
| 2009 | 8.5 | 10.9 | 6.1 | 1.79 |
| 2010 | 8.7 | 10.9 | 6.7 | 1.63 |
| 2011 | 9.2 | 10.6 | 7.9 | 1.34 |
| 2012 | 11.0 | 11.9 | 10.2 | 1.17 |

**Բակալավրիատում ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի և գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը), 2007-2012թթ.**

| | Համախառն ընդգրկվածության ցուցանիշը, % | | | Գենդերային հավասարության ցուցանիշը |
|---|---|---|---|---|
| | ընդամենը | կանայք | տղամարդիկ | |
| 2007 | 44.4 | 49.4 | 39.5 | 1.25 |
| 2008 | 45.1 | 49.0 | 41.3 | 1.19 |
| 2009 | 44.8 | 48.7 | 41.1 | 1.18 |
| 2010 | 44.0 | 47.4 | 40.7 | 1.16 |
| 2011 | 39.2 | 42.4 | 36.2 | 1.17 |
| 2012 | 44.9 | 46.5 | 43.3 | 1.07 |

**Մագիստրատուրայում ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի և գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը), 2007-2012թթ.**

| | Համախառն ընդգրկվածության ցուցանիշը, % | | | Գենդերային հավասարության ցուցանիշը |
|---|---|---|---|---|
| | ընդամենը | կանայք | տղամարդիկ | |
| 2007 | 3.4 | 3.9 | 2.9 | 1.34 |
| 2008 | 5.4 | 6.8 | 4.1 | 1.66 |
| 2009 | 7.1 | 9.4 | 4.9 | 1.92 |
| 2010 | 8.3 | 11.4 | 5.3 | 2.15 |

| | Համախառն ընդգրկվածության ցուցանիշը, % | | | Գենդերային հավասարության ցուցանիշը |
|---|---|---|---|---|
| | ընդամենը | կանայք | տղամարդիկ | |
| 2011 | 9.4 | 13.5 | 5.4 | 2.50 |
| 2012 | 10.2 | 13.7 | 6.6 | 2.08 |

**Հոդված 11**

71. Կոմիտեի հանձնարարականների 32-33 կետեր

Վերոհիշյալ հոդվածի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, մասնավորապես օրենսգրքի 3, 4, 114, 141, 172, 173, 243, 258 հոդվածներով, որոնք՝

1) սահմանում են աշխատանքային օրենսդրության սկզբունքները (հոդ. 3) - կետեր a), b), c), d), e), f)
2) արգելում են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելը (հոդ. 114) - կետ a)
3) սահմանում են ոչ լրիվ աշխատաժամանակը (հոդ. 141) - կետ c)
4) սահմանում են հղիության ու ծննդաբերության կապակցությամբ, ինչպես նաև նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի ժամկետները (հոդ. 172, 173) - կետ b)
5) ապահովում են աշխատողի անվտանգ աշխատելու իրավունքը (հոդ. 243) - կետ f)
6) պաշտպանում են մայրություն (հոդ. 258) - կետ d)

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ հանրապետությունում դեռևս խնդիր է բնակչության զբաղվածությունը: Ընդ որում գործազուրկների մեծ մասը կազմում են կանայք: Այսպես 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ գործազուրկ կանանց թիվը կազմել է գործազուրկների ընդհանուր թվի 73.4%-ը, իսկ գործազուրկների 24.1%-ը՝ երիտասարդներ են:

Ուսումնասիրությունները նաև փաստում են, որ հիմնական պահանջարկը վերաբերվում է բանվորական աշխատանքներին, որտեղ ներգրավված են տղամարդիկ (տես կից աղյուսակը):
Սա իհարկե խնդիր է առաջացնում պետության կողմից ընձեռած մասնագիտության ազատ ընտրության հնարավորությունն իրականացնելու, զբաղվածության երաշխիքները կատարելու, հռչակված հավասար վարձատրության, սոցիալական ապահովության, առողջության պաշտպանության իրավունքներն իրագործելու տեսանկյունից:

72. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով որպես աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունք սահմանված է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից և այլն:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տղամարդկանց և կանանց միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց վճարվում է նույն չափով աշխատավարձ:

73.Անցած տարիների ընթացքում որոշակի փոփոխություններ են կատարվել ՀՀ աշխատանքային օրենսգիրքում՝ մասնավորապես, ուժը կորցրած է ճանաչվել աշխատանքային կարգապահության կոպիտ խախտումներին վերաբերող 221-րդ հոդվածը: Միևնույն ժամանակ խտրականություն չի համարվում այնպիսի բացառությունների կամ տարբերակումների սահմանումը, որոնք վերաբերում են տվյալ աշխատանքի բնույթին կամ նպատակ ունեն պաշտպանելու սոցիալական կամ իրավական պաշտպանության կարիք ունեցող անձանց:

74.Անփոփոխ են մնացել հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդների տևողությունը և ընթացակարգերը: Աշխատող կնոջը տրամադրվում է 140-ից մինչև 180 օր արձակուրդ (ՀՀ ԱՕ, հոդ.172): Երեխայի խնամքի համար արձակուրդ տրամադրվում է աշխատող ծնողներից մեկին, իրենց ցանկությամբ, մինչև երեխայի երեք տարին լրանալը (ՀՀ ԱՕ, հոդ.173):
Աշխատողի պահանջով մինչև երկու ամիս չվճարվող արձակուրդ տրամադրվում է հղիության ու ծննդաբերության արձակուրդում գտնվող,

ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն (ՀՀ ԱՕ, հոդ.176):

75.Գենդերային տեսանկյունից զգայուն են օրենսգրքի այն հոդվածները, որոնք կանոնակարգում են արտաժամյա աշխատանքները (հոդ.144), աշխատանքները գիշերային ժամանակ, հերթապահությունը, ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը: Նշված հոդվածները սահմանում են երեխա խնամող աշխատողների (թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց) ընտանեկան պարտականությունների կատարման հետ կապված իրավունքները: Այս առումով բացառություն է կազմում օրենսգրքի 258 հոդվածը (մայրության պաշտպանություն), որն արգելում է հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներին:

76. «2012 թվականից զբաղվածության պետական կարգավորման բնագավառում իրականացվում են համալիր բարեփոխումներ, մասնավորապես՝ 2012թ. ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունը, իսկ զբաղվածության քաղաքականության նոր մոդելի իրավական հիմքերի ամրագրման և ռազմավարության գերակա նպատակների իրականացման հիմնական մեխանիզմների ամբողջական և արդյունավետ օրենսդրական ապահովման նպատակով մշակվել և 2013թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը: 2014թ. սկսած՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար (այս խմբում առաջնահերթություն է տրված նաև կանաց, այդ թվում հաշմանդամություն ունեցողներին) զբաղվածության ամենամյա պետական ծրագրերով, նախկինում գործող թվով 7 ակտիվ ծրագրերից բացի, նախատեսված են պետական հետևյալ նոր ծրագրերը՝

1) աշխատանքի տեղավորման դեպքում՝ անհրաժեշտ աշխատանքային ունակություններ և կարողություններ ձեռք բերելու համար միանվագ փոխհատուցում,

2) փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար ֆինանսական և խորհրդատվական աջակցություն,

3) լիազորված մարմնի հետ համագործակցող ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար ֆինանսական աջակցություն,

4) լիազորված մարմնի միջնորդությամբ հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում,

5) սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանը ֆինանսական և խորհրդատվական աջակցություն:

Զբաղվածության պետական գործակալության տվյալներով 2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանք փնտրողների թիվը կազմում է 65.2 հազար, որից 46.8 հազարը կանայք են, 15.7 հազարը՝ երիտասարդ: Գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 85,9 %-ը, կամ 56.0 հազար: Գործազուրկ կանանց թիվը կազմում է գործազուրկների թվի 73,7%-ը, կամ 41.3 հազ. մարդ: Երիտասարդների թվաքանակը կազմում է գործազուրկների 23.4%-ը կամ 13.1 հազ. մարդ:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանքի են ընդունվել 12659 աշխատանք փնտրող, որից 7868-ը՝ կին: Աշխատանքի տեղավորման հարցում լուրջ դժվարություններ ունեն աշխատանքային փորձ չունեցող երիտասարդները, կանայք և հատկապես 50-ից բարձր տարիքի անձիք, որոնք երկարատև գործազրկության հետևանքով կորցրել են իրենց որակավորումը և աշխատանքի անցնելու համար անհրաժեշտ է նրանց ընդգրկել մասնագիտական ուսուցման դասընթացներում:

Աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը մեղմելու նպատակով Զբաղվածության պետական գործակալության միջոցով մասնագիտական ուսուցում է կազմակերպվել 990 կին գործազուրկի համար համակարգչային հաշվապահություն, կարող, վարսահարդար, դիմահարդար, մատնահարդար, հրուշակագործ, հացթուխ, սեղանի ձևավորող, խոհարար և այլ մասնագիտություններով:

2013թ. սկզբից *գործազրկության նպաստի ստացման իրավունք* է ձեռք բերել շուրջ 15234 գործազուրկ՝ որից 10068 կին:

*«Անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին»* ծրագրով նախատեսված 216-ի փոխարեն ընդգրկվել է 241 անձ, որից 156-ը հաշմանդամ, 128-ը՝ կին:

*«Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին տրվող ֆինանսական աջակցություն»* ծրագրով ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել հիմնականում որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար, և

նախատեսված 150-ի փոխարեն ծրագրում ընդգրկվել է 102 անձ, որից 7-ը հաշմանդամություն ունեցող անձ, 36-ը կին:

<<Մասնագիտական ուսուցման կազմակերպում>> ծրագրում ընդգրկվել է 1500 անձ նախատեսված 1454 անձի փոխարեն: Ծրագրում ընդգրկվածներից 990-ը կին է:

*«Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկի նյութական ծախսերի հատուցում»* ծրագրով նախատեսված 32-ի փոխարեն այլ վայր աշխատանքի է գործուղվել 29 անձ, որից 11-ը կին , 3-ը հաշմանդամություն ունեցող անձ:

*«Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ»* ծրագրով նախատեսված 300-ի փոխարեն աշխատանքային պրակտիկա է անցել 305 գործազուրկ, որից 5-ը հաշմանդամություն ունեցող անձ, 198-ը կին:

*«Աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ»* ծրագրով նախատեսված 55-ի փոխարեն հարմարեցվել է 53 աշխատատեղ: Ծրագրում ընդգրկվածներից 23-ը կին է:

*Կազմակերպվել է աշխատանքի 11 տոնավաճառ*՝ Աբովյան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Երևան/3/, Ջերմուկ, Ապարան, Արտաշատ և Կապան քաղաքներում, որոնց մասնակցել է 417 գործատու, շուրջ 16450 աշխատանք փնտրող, գործատուների կողմից ներկայացվել է 2083 առկա և սպասվելիք 615 թափուր աշխատատեղ: ծրագրի արդյունքում աշխատանքի է տեղավորվել է 635 աշխատանք փնտրող:

*«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսությունների վերականգնման ծրագրով* կարկտահարությունից տուժած համայնքներում իրականացվել է 630 ծրագիր (յորաքանչյուր ընտանիք համար իրականացրել է մեկ ծրագիր), նախատեսված 500 փոխարեն, որում ընդգրկվել է 1411 անձ, այդ թվում՝ կանայք :

***Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ներառվածների թվաքանակը , 2013թ.***

(տարեկան թվաքանակը, մարդ)

| | | Ընդամենը | կին | տղամարդ |
|---|---|---|---|---|
| | **Ընդամենը /**ակտիվ ծրագրերում ընդգրկվել է**/** | 3644 | 1462 | 771 |
| 1 | <<Գործազրկության նպաստի վճարում>> /ամսական միջին թվով նպաստառուների թիվ/ | 10090 | 8942 | 1148 |
| 2 | «Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին տրվող ֆինանսական աջակցություն» | 105 | 36 | 69 |
| 3 | «Անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» | 241 | 128 | 113 |
| 4 | <<Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցում>>, այդ թվում | 1377 | 990 | 387 |
| | Գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատերհանդիսացող աշխատանք փնտրող | 212 | 152 | 60 |
| 5 | <<Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված ամձանց վերամասնագիտացում>> | 7 | 6 | 1 |
| 6 | .<<Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպում>> | 116 | 70 | 46 |
| 7 | «Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկի նյութական ծախսերի հատուցում» | 29 | 11 | 18 |
| 8 | <<Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում գործատուի մոտ>> | 305 | 198 | 107 |
| 9 | “Աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ” | 53 | 23 | 30 |
| 10 | <<Թափուր աշխատատեղերի տոնավաճառ>> | 16450 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | /11 տոնավաճառ/ | | |
| 11 | «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսությունների վերականգնման ծրագրով | 1411 | | |
| 12 | Հաշվառված աշխատանք փնտրողներից տեղավորվել են աշխատանքի | 12659 | 7868 | 4791 |

77. 2011թ. մայիսի 26-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման կարգը (հոդված 1): Հանրային ծառայությունը ընդգրկում է պետական ծառայությունը (քաղաքացիական, դատական, դիվանագիտական ծառայություն, հատուկ ծառայություններ՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայություն, ՀՀ ԱԺ աշխատակազմում, դատախազությունում պետական ծառայությունը), համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները (հոդված 3, մաս 1): Հանրային ծառայության հիմնական սկզբունքներից է օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարությունը (հոդված 3, մաս 1): Հանրային ծառայողի հիմնական իրավունքն է աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը (հոդված 20, կետ 5): Յուրաքանչյուր հանրային ծառայող առանց որևէ խտրականության ունի օրենսդրությամբ սահմանված չափով վարձատրության իրավունք (հոդված 27, մաս 2):

Պետական յուրաքանչյուր ծառայությունում վարձատրության հարցերը հիմնականում կարգավորվում են յուրաքանչյուր ծառայության մասին օրենքով: Հիմնական և լրացուցիչ աշխատավարձը թե' պետական և թե' համայնքային ծառայությունում սահմանված է որևէ կոնկրետ պաշտոնի համար և սեռային որևէ խտրականություն կիրառել հնարավոր չէ:

Քաղաքացիական ծառայողների բաշխումը ըստ պաշտոնների խմբերի և սեռային պատկանելության

| **պաշտոնի**<br><br>**խումբը**<br>**սեռը** | բարձրագույն պաշտոններ | գլխավոր պաշտոններ | առաջատար պաշտոններ | կրտսեր պաշտոններ |
|---|---|---|---|---|
| **ընդամենը** | 1.9% | 43.6% | 35% | 19.5% |
| **տղամարդ** | 90.2% | 59.9% | 42% | 31.4% |
| **կին** | 9.8% | 40.1% | 58% | 68.6% |

Ընդ որում քաղաքացիական ծառայության պաշտոնները քաղաքացիական ծառայողները զբաղեցնում են մրցութային կարգով կամ արտամրցույթով:

78. 2010 թվականից ՀՀ ոստիկանության կրթահամալիրում իրականացվող բարեփոխումների շրջանակներում հանվել է քվոտան, որի արդյունքում այսօր ապագա կին ոստիկան ուսանողների թվաքանակը կազմում է շուրջ 30%-ը՝ նախկին 5 %-ի համեմատությամբ:

**Հոդված 12**

79. Կոմիտեի հանձնարարականների 34-35 կետեր

*Օրենսդրություն*

Կանանց, մոր և մանկան առողջության պահպանումը պետական մակարդակով շարունակաբար եղել և մնում է պետության և ՀՀ ԱՆ գերակայությունների շարքում: Կանանց առողջության պահպանման և բարելավման, առողջապահության ոլորտում հավասար իրավունքների ապահովման համար որոշակի աշխատանքներ են կատարվել օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, մասնավորապես՝ ՀՀ կառավարության կողմից 2007-2012թթ հաստատվել են մի շարք որոշումներ.

1) «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրը, ռազմավարությունը և գործողությունների ժամանակացույցը 2007-2015թթ հաստատելու մասին», 2007թ.;

2) «Երեխաների և դեռահասների առողջության պահպանման և զարգացման 2009-2015թթ.ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2010թ.;

3) «Ծննդի, պերինատալ մահվան և մահվան բժշկական վկայականների հաշվառման և տրամադրման կարգը», որը հաստատվել է ՀՀ Կառավարության 2011թ. 1156-Ն որոշմամբ;

4) 2009թ. հաստատվել է «Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) ներհիվանդանոցային վարակի կանխարգելում և հակահամաճարակային համալիր միջոցառումների կանխարգելում և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում և իրականացում» Սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր. ՍԿ 3.1.6-011-09

5) «Հայաստանի Հանրապետությունում միկրոտարրերով և վիտամիններով ցորենի ալյուրի հարստացման հայեցակարգը» որն արժանացել է հավանության ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմամբ:

6) ՀՀ ազգային ժողովի կողմից 2013թ. ընդունվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը;

7) Հաշվի առնելով կանանց մահացության և հիվանդացության կառուցվածքում վերարտադրողական օրգանների, այդ թվում կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղից բարձր մահացությունը, այդ հիվանդությունների կանխարգելման, մահացության իջեցման նպատակով 2010թ. հաստատվեց Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի նիստի N 3 արձանագրային «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» որոշումը, որի շրջանակներում այնուհետև հատատվեց «Առավել բարձր մահացության բերող երեք հիվանդության՝ արյան շրջանառության համակարգի(սրտանոթային հիվանդություններ) չարորակ նորագոյացությունների և շաքարային դիաբետի ազգային

ռազմավարական ծրագրերին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» 2011 թվականի որոշումը:

8) 2011թ. ընթացքում ՀՀ կառավարության թիվ 318-Ն և 748-Ն որոշումներում կատարվել են համապատասխան փոփոխություններ և 2011թ. սկսվել է 14-15 տարեկան տղաների և 15 տարեկան աղջիկների համալիր առողջական վիճակի, այդ թվում վերարտադրողական համակարգի հետազոտում, ախտաբանությունների հայտնաբերում և բուժում, ինչը լուրջ գրավական է դեռահասների առողջության բարելավման, առողջ ծնող դառնալու և անպտղության կանխարգելման համար:

9) Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել են վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված մի շարք կանոնակարգեր, ռազմավարություններ, ծրագրեր, որոշումներ, մասնավորապես վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակները ու բժշկական գործելակերպը, ինչ հնարավորություն է տալիս կանանց հաղթահարել անպտղության հիմնախնդիրը և ռեալիզացնել առաջընթացի արդյունքներից օգտվելու մարդու հիմնարար իրավունքներից մեկը:

10) Կանանց կողմից առաջընթացի մյուս արդյունքից՝ հղիության արհեստական ընդհատման դեղորայքային ընդհատումից օգտվելու իրավունքի ռեալիզացիան է, մեթոդը ներառվել է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ.թիվ 975-Ա հրամանով հաստատված «Հղիության արհեստական ընդհատման դեպքում բուժօգնության կազմակերպման և տրամադրման» կլինիկական ուղեցույցում:

11) Հղիության և ծննդաբերության բուժօգնության բարելավման նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 20.07.2011թ. թիվ 1408-Ա հրամանով հաստատվել և գործնական առողջապահության մեջ ներդրվել է "Արդյունավետ պերինատալ բուժօգնութուն և խնամք" ձեռնարկը մանկաբարձ-գինեկոլոգների համար և իրականացվել է ուսուցում մոտ 100 ծառայություն մատուցողների համար:

Ձեռնարկում ներառված են ԱՀԿ-ի վերջին տարիների ապացույցների վրա հիմնված հանձնարականները հղիության և ծննդաբերության

վարման, ինչպես նաև պտղի ներարգանդային վիճակի գնահատման, արատների վաղ հայտնաբերման և բարդությունների կանխարգելման ժամանակակից մոտեցումների մասին, ինչը նպաստեց առողջապահական ցուցանիշների բարելավմանը:

12) Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության եվրոպական գրասենյակի և ՀՀ ԱՆ համագործակցության շրջանակներում ՀՀ ԱՆ 16.05.2011թ. թիվ 925-Ա հրամանով իրականացվել է «Ապացուցողական բժշկության ներդրումը ընտանիքի պլանավորման ծառայություններում» թեմայով ազգային 30 դասավանդողների պատրաստում, դասավանդողների համար ձեռնարկի հրատարակում:

13) ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. օգոստոսի 26-ի թիվ 2344-Ա հրամանով հաստատվել և գործնական առողջապահության մեջ ներդրվել է «Սեռական բռնության ենթարկված անձանց բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման գործելակերպը» բուժաշխատողների համար կլինիկական ուղեցույցը:

80. Այդ բարեփոխումներն ուղղված են հատկապես անապահով խավերին օժանդակելուն, կանանց բուժօգնության որակի և մատչելիության բարձրացմանը, հատկապես անհավասարության և տարբերությունների վերացմանը կախված, բնակավայրից գյուղ-քաղաք կտրվածքով, ընտանիքի նյութական ապահովվածության աստիճանից, կրթական մակարդակից և այլն:

81. Թեև օրենսդրությունը բավականին բարենպաստ է այս ոլորտում, այնուամենայնիվ կանանց իրավիճակի վերլուծությունը փաստում է վերարտադրողական առողջության պահպանման խնդիրների հետ կապված որոշ սահմանափակումների մասին, մասնավորապես, կանանց համար առավել արդյունավետ հակաբեղմնավորիչների և որոշ դեղորայքի (հղիության դեղորայքային ընդհատման համար անհրաժեշտ) մատչելիության առումով, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու սահմանափակ հնարավորության, ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար:

82. Հայաստանի Հանրապետությունում առկա է առողջապահական կազմակերպությունների լայն ցանց: Հայաստանը այն եզակի երկրներից է, որն անգամ ամենափոքր գյուղական բնակավայրերում ունի բուժօգնություն իրականացնող հիմնարկներ:

Հայաստանում գործում են 614 բուժական-մանկաբարձական կետեր, 255 ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպություն, 80 պոլիկլինիկա, 101 կանանց կոնսուլտացիաներ և կաբինետներ, 52 բժշկական կենտրոններ, որոնց կազմում նաև մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնար բաժանմունքներ, 11 ինքնուրույն ծննդատներ, 4 Երևանում և 7 մարզերում:

83.Բուժօգնության որակի և մատչելիություն գյուղ/քաղաք կտրվածքում տարբերությունները կրճատելու նպատակով մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում մարզերում շահագործվել է 11 խոշոր բժշկական կենտրոն՝ Հրազդանում, Իջևանում, Արմավիրում, Գյումրիում, Արարատում, Գորիսում, Ապարանում, Գավառում, Ալավերդիում, Քաջարանում և Նոյեմբերյանում:

Սկսվել են Ագարակում, Վանաձորում բժշկական նոր կենտրոնների շինարարությունները:

Վերանորոգվել են շուրջ 3 տասնյակ գյուղական առողջության կենտրոններ և ընտանեկան բժշկի գրասենյակներ: Արդիականացված բժշկական հաստատություններում իրականացվել է ոչ միայն շենքերի հիմնանորոգում, այլ դրանք հագեցվել են ժամանակակից բժշկական սարքավորումներով, պարագաներով և կահույքով, ինչպես նաև իրականացվել է բժշկական անձնակազմի վերապատրաստում:

84. Ակնհայտ է նաև առաջընթացը շտապ օգնության՝ 1-03 ծառայության որակի բարելավման, նոր մեքենաների ձեռք բերման, ծառայության արդիականացման, սարքավորումներով և բարձրորակ կադրերով հագեցման գործում:

85. Կանանց վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության մատչելիության բարձրացման նպատակով, այդ թվում գյուղական և հեռավոր շրջանների կանանց համար ներդրվեց 2008 թվականից ներդրվեց անվճար ծննդօգնության պետական հավաստագրի համակարգը, որը նպաստում է կանանց համար անվճար ծննդօգնության իրական մատչելիության և հասանելության ապահովմանը բոլոր խավերի

համար, շուրջ 10 անգամ ծննդաբերությունների համար կատարվող պաշտոնական վճարումների կրճատմանը, ինչն արտացոլված են Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2010թ. զեկույցում (Գծապատկեր 1):




Գծապատկեր 1.

**Ծանոթություն**. առաջին սյունակի տվյալները արտացոլում են բնակչության կողմից պաշտոնական վճարումների հաճախականությունը մինչև հավաստագրի ներդրումը, իսկ երկրորդ սյունակը՝ ներդրումներից հետո:

86. Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրումը նպաստեց նաև մանկաբարձական բնութագրական ցուցանիշների բարելավմանը, մասնավորապես.

1) Հղիների վաղ հաշվառման ցուցանիշի բարձրացում՝ 35%-ով: Հղիների սկրինինգի գործընթացի բարելավում, ՄԻԱՎ տեստավորման ցուցանիշի բարձրացում՝ 90% և ավելի.

2) Բարձրացել է հղիների սիֆիլիսի, գոնոռեայի, տրիխոմոնիազի հետազոտության ընդգրկվածությունը, ինչը վերջին տարիներին կազմել է շուրջ 95%.

3) Մանկական մահացության կառուցվածքում վաղ նորածնային մահացության տեսակարար կշռի կրճատում շուրջ 10 տոկոսով.

4) Պերինատալ պատճառներից մանկական մահացության ցուցանիշի նվազեցում գրեթե 1/3-ով:

Համաձայն ժողովրդագրության և առողջության հարցերի 2010թ.կատարած հետազոտության տվյալների.

1) նախածննդյան գոնե մեկ այց կատարած հղիների ցուցանիշը 2005թ.համեմատությամբ աճել է 6%-ով և դարձել է 99%.

2) իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը դարձել է 99.4%.

3) հղիների 100%-ի ծննդօգնությունը իրականացրել է որակավորված բուժաշխատողը.

4) կանանց 92%-ը ստացել են հետծննդաբերական օգնություն ծննդաբերությանը հաջորդող 2 օրվա ընթացքում.

5) ծննդօգնության պետական պատվերի շրջանակներում շարունակվել է բնածին արատների վաղ ախտորոշման նպատակով հղիության ընթացքում անկախ բնակության վայրից համատարած գերձայնային հետազոտության իրականացումը, ինչը թույլ է տվել նախորդ տարիների համեմատությամբ 7%-ով մեծացնել բնածին արատների ներարգանդային հայտնաբերման ցուցանիշը.

6) բացի այդ շարունակվել են կանխարգելիչ մասնավորապես, հղիության արհեստական ընդհատումների և սեռավարակների կանխարգելման, ինչպես նաև վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ծրագրերը.

7) 2011թ. Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտում Մոսկվայի համանուն ինստիտուտի հետ համագործակցության շրջանակներում բացվեց

«Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների» լաբորատորիան, որը թվով 4-րդ է հանրապետությունում.

8) շնորհիվ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման, տարեկան մոտ 1000 անպտուղ ամուսնական զույգի մոտ արձանագրվում է անպտղության հաղթահարում և հղիության փաստի արձանագրում:

87. Մայրական առողջության վիճակն արտացոլող ինտեգրալ ամենակարևոր ցուցանիշը մայրական մահացության ցուցանիշն է:

Մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշի համեմատությունը վկայում է, որ Հայաստանում վերջին տարիների ընթացքում մայրական մահացության մակարդակը շարունակաբար իջել է, նվազելով ավելի քան 1/3-ով: Ըստ ՀՀ Առողջապահության նախարարության գերատեսչական տվյալների, 2008թ. գրանցվել է մայրական մահացության 15 դեպք, 2009թ.՝ 13 դեպք, իսկ 2010թ., 2011թ. 3 –ական դեպք (6.8/100 000 կենդանի ծնունդից):

2006-2008թթ. մայրական մահվան միջին եռամյա ցուցանիշը կազմել է 28,2/100 000 կենդանածնության հաշվով, իսկ 2010-2012թթ.համանուն ցուցանիշը կազմել է 12,9, այսինքն կրճատվել է մոտ 2 անգամ (գծապատկեր 2) :

Պատճառագիտական կազմում ևս տեղի են ունեցել մեծ փոփոխություններ, մայրական մահվան հիմնական պատճառները էքստրագենիտալ կյանքի հետ անհամատեղելի ծանր ախտաբանություններն են,

Մայրական մահացության վերլուծությունը վկայում է, որ այն շուրջ 30%-ով ավելի բարձր է գյուղական բնակչության շրջանում, ինչն ակնհայտորեն վկայում է գյուղաբնակ կանանց համար վերարտադրողական առողջության առավել վտանգված լինելու, ինչպես նաև նրանց համար ծննօգնության ծառայությունների մատչելիության ցածր մակարդակի մասին: Աղքատությունը, որ առավել բարձր է գյուղում, նկարագրված հիմնախնդրի բազմագործոն պատճառների շարքում հիմնականը կարող է լինել:

Աբորտների արդյունքում մահացության դեպքերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Մայրական մահվան դեպքերի, այդ թվում պայմանավորված աբորտով, տեղեկատվությունը հավաքագրվում է 2 աղբյուրից `ՀՀ ԱՆ հավաքագրում է ծննդօգնության հիմնարկներից և 2-րդ աղբյուրը` ՀՀ Վիճակագրության ազգային ծառայությունն է:




Գծապատկեր 2. Մայրական մահացության դինամիկան

88. Հղիության արհեստական ընդհատումներից հետո մահացած կանանց թվաքանակն ոչ միայն հայտնի է, այլև իրականացվում է բոլոր դեպքերի, այդ թվում աբորտների հետևանքով մահացած կանանց դեպքերի վերլուծություն /աղյուսակ 1/:

Աղյուսակ 1

Հղիության արհեստական ընդհատումներից հետո մահացած կանանց թվաքանակն ըստ տարիքային խմբերի, 2007-2012թթ.

մարդ

| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մինչև 15 տարեկան | _ | _ | _ | _ | _ | _ |
| 15 - 19 տարեկան | _ | _ | _ | _ | _ | _ |
| 20 - 34 տարեկան | _ | 2 | _ | _ | _ | _ |
| 35 - 49 տարեկան | _ | _ | 1 | _ | _ | _ |
| Ընդամենը | _ | 2 | 1 | _ | _ | _ |

Շնորհիվ հանրապետությունում հղիության արհեստական ընդհատման բժշկական գործընթացի բարելավման և հղիության դեղորայքային ընդհատման ծրագրի ներդրման, մայրական մահացության կառուցվածքում վերջին տարիներին կատարվել են լուրջ փոփոխություններ մայրական մահացության կառուցվածքում հղիության արհեստական ընդհատումով և դրա բարդություններով պայմանավորված մայրական մահվան դեպքերի կանխարգելման և իջեցման ուղղությամբ:

*89. Հղիության արհեստական ընդհատումների իրավիճակը և միտումները*

Համաձայն պաշտոնական վիճակագրության, ինչպես նաև Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2010թ զեկույցի տվյալների համաձայն աբորտների թվի բարձրացում դինամիկայում չի արձանագրվել /աղյուսակ 2ա, բ, գ/:

Աղյուսակ 2

Հղիության արհեստական ընդհատումների բնութագրական ցուցանիշներ

2007-2011թթ., ՀՀ ԱՎԾ

| Ցուցանիշը | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 100 կենդանածնի և մեռելածնի հաշվով | 28.3 | 29.8 | 30.5 | 26.9 | 27.4 | 29,8 |
| Ֆերտիլային տարիքի 1 000 կնոջ հաշվով | 12.4 | 13.5 | 15.0 | 13.5 | 13.5 | 15,8 |

90. Աբորտների ընդհանուր գործակիցը Հայաստանի համար կազմում է 0.8 մեկ կնոջ հաշվով: Դա նշանակում է, որ Հայաստանի կանանց աբորտների միջին քանակը մոտավորապես համապատասխանում է մեկ կնոջ հաշվով երեխաների թվաքանակի կեսին (ԾԳԳ=1.7): Աբորտի տարիքային գործակիցները հասնում են առավելագույն մակարդակի 25-29 տարեկան կանանց շրջանում, ապա նվազում՝ ավելի բարձր տարիքի կանանց մոտ: Համաձայն ՀԺԱՀ 2010թ-ի արդյունքների, ԱԸԳ-ն կազմել է 0.8, ինչը նշանակալիորեն ցածր է ՀԺԱՀ 2005-ի 1.8 և ՀԺԱՀ 2000-ի 2.6 ցուցանիշներից, այսինքն արձանագրվել է աբորտների թվի նվազում շուրջ 3 անգամ: Նման տարբերության պատճառը թերևս հնարավոր է բացատրել նրանով, որ ի տարբերություն 2000 և 2005թթ-ի, 2010թ-ի հետազոտության տվյալներով, ամուսնացած կանանց շրջանում նախ բարձրացել է ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ցուցանիշը (ի տարբերություն 2000թ-ի 22 տոկոս և 2005թ-ի 20 տոկոս ցուցանիշների, 2010թ-ին այն կազմել է 27 տոկոս), բացի այդ ամուսնացած կանանց շրջանում վերջին 10 տարիների ընթացքում կրկնապատկվել է պահպանակի օգտագործումը (15 տոկոս 2010թ-ին, ի տարբերություն 2005թ-ի 8 և 2000թ-ի 7 տոկոս ցուցանիշների):

Հավանական է, որ ԱԸԳ-ի կրճատումը մեծապես պայմանավորված է հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործման աճով:

Հարցված կանանց 31%-ը երբևէ կատարել է աբորտ, ի տարբերություն 2005 և 2000թթ-ի արդյունքների, 2010թ. առավել քիչ թվով, մոտ 2,5 անգամ ավելի քիչ թվով կանայք են աբորտներ կատարել:

91. Ինչ վերաբերում է դեռահասության շրջանում հղիությունների դեպքերին, ապա 2008-2011թթ. մինչև 14 տարեկան անչափահասների շրջանում արձանագրվել են ընդամենը հղիության 4 դեպք, որոնք բժշկական ցուցումներով ենթարկվել են հղիության արհեստական ընդհատման, բացառությամբ 2011թ.1 դեպքի:

Իսկ 15-17 տարիքային խմբում արձանագրվել են առավելագույնը մինչև 169 հղիության դեպքեր, որոնք սովորաբար ավարտվել են ծննդաբերություններով, քանի որ այդ կանայք ունեցել են ընտանիք և եղել են փաստացի վաղ ամուսնության մեջ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հղիությունները դեռահասության շրջանում

| տարեթիվ | Հղիությունների ընդհանուր թիվը հանրապետությունում | 15-18 տարեկան | | |
|---|---|---|---|---|
| | | Հղիությունների ընդհանուր թիվը | աբորտ | ծննդաբերություն |
| 2007թ | 52160 | 129 | 18 | 111 |
| 2008թ | 54245 | 141 | 17 | 124 |
| 2009թ | 59899 | 161 | 16 | 145 |
| 2010թ | 59326 | 111 | 16 | 95 |
| 2011թ | 58925 | 169 | 15 | 154 |
| 2012 | 57496 | 149 | 14 | 163 |

92. ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի համագործակցության շրջանակներում Փարիզի

Բնակչության և զարգացման կենտրոնի Զարգացման հետազոտական ինստիտուտը ներկայացնող դոկտոր Քրիստոֆ Գիլմոտոյի և ազգային փորձագետների կողմից 2011 և 2012թթ. իրականացվեց նորածինների սեռերի համամասնության (ՆՍՀ) խորքային պատճառների ուսումնասիրությանը նվիրված հետազոտություն, որը թույլ տվեց կատարելու կանխատեսումներ երկրի համար սեռերի հարաբերակցության հնարավոր հետևանքների առումով և մշակելու կանխարգելման ուղիներ:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին երեխայի դեպքում տղա/աղջիկ հարաբերակցության գործակիցը կազմել է 1.04-1.07, ինչը համապատասխանում է կենսաբանորեն սահմանված միջին վիճակագրական ցուցանիշին (1.02-1.06), սկսած 2-րդ երեխայից նկատելի է ցուցանիշի բարձրացման միտում (1.08 – 1.13), սակայն այն ակնհայտորեն բարձր է 3-րդ և 4-րդ երեխաների դեպքում, երբ տվյալ ցուցանիշը կազմել է՝ 1.6 և 1.7:

Սկսած 30-34 տարիքային խմբից սեռերի հարաբերակցությունը շտկվում է /աղյուսակ 4/

Աղյուսակ 4

**Տղամարդ/կին հարաբերակցությունն ըստ տարիքային խմբերի**

*(տղամարդկանց թվաքանակը համապատասխան տարիքային խմբի 100 կնոջ հաշվով, միջին տարեկան)*

| | 0 | 1-4 | 5-9 | 10-14 | 15-19 | 20-24 | 25-29 | 30-34 | 35-39 | 40-44 | 45-49 | 50-54 | 55-59 | 60-64 | 65-69 | 70-74 | 75-79 | 80-84 | 85+ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2010 | 114 | 114 | 116 | 112 | 105 | 103 | 102 | 98 | 94 | 91 | 89 | 88 | 84 | 78 | 72 | 68 | 66 | 52 | 32 | 94 |
| 2011 | 114 | 114 | 115 | 113 | 106 | 103 | 102 | 99 | 94 | 91 | 89 | 89 | 84 | 79 | 71 | 67 | 65 | 55 | 30 | 94 |

93. Ընտանիքի պլանավորման և Հակաբեղմնավորիչ միջոցների կիրառման միտումները

Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2010 թվականի հետազոտությունը տեղեկատվություն է հավաքագրել

հակաբեղմնավորման մեթոդների իմացության և օգտագործման վերաբերյալ: Ըստ ՀԺԱՀ-2010թ-ի տվյալների հարցման պահին ամուսնացած կանանց կեսից ավելին՝ 55 տոկոսը, օգտագործել է հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Հակաբեղմնավորման մեթոդ օգտագործողների կեսը նախապատվությունը տալիս է հակաբեղմնավորման ավանդական մեթոդներին (28 տոկոս), իսկ մյուս կեսը՝ ժամանակակից (27 տոկոս): Առավել հաճախակի օգտագործվող մեթոդն է ընդհատված սեռական հարաբերությունը (25 տոկոս), որին հաջորդում է տղամարդու պահպանակը (15 տոկոս), ապա Ներարգանդային միջոցը (ՆԱՄ ) (10 տոկոս): Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ցուցանիշը տարիքին զուգահեռ աճում է և հասնում իր գագաթնակետին՝ 70 տոկոս, հարցման պահին ամուսնացած կանանց 30-34 տարիքային խմբում, ապա նվազում է մինչև 37 տոկոս՝ 45-49 տարիքային խմբի դեպքում:

94. Հակաբեղմնավորման մեթոդների ընդհանուր օգտագործման ցուցանիշն ամուսնացած կանանց շրջանում էապես չի տարբերվում ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի (համապատասխանաբար՝ 58 և 51 տոկոս): Այնուամենայնիվ, քաղաքային բնակավայրի կանայք առավել հակված են հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործմանը, քան գյուղական բնակավայրերի կանայք (համապատասխանաբար՝ 33 և 19 տոկոս):

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ցուցանիշի էական տարբերություններ են նկատվում մարզային կտրվածքով, որտեղ առավել քիչ են հակված հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործմանը, և ինչպես Արագածոտնի և Արմավիրի կանայք, նրանք ևս մեծապես վստահում են ընդհատված սեռական հարաբերության մեթոդին:

95.Ինչպես և ակնկալվում էր, հակաբեղմնավորման՝ հատկապես ժամանակակից, մեթոդների օգտագործման մակարդակն աճում է կնոջ կրթական մակարդակին զուգահեռ: Բարձրագույն կրթություն ունեցող կանայք կրկնակի անգամ ավելի են հակված ժամանակակից մեթոդների օգտագործմանը, քան միջնակարգ կամ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող կանայք (39 տոկոս՝ 20-21 տոկոսի համեմատ): Ընդհանուր առմամբ, Հայաստանի կանայք մինչև առաջին երեխայի ծնունդը հակված չեն հակաբեղմնավորման մեթոդների օգտագործմանը:

Այսպիսով, ի տարբերություն հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման 2000-ի 61 տոկոս ցուցանիշի, 2005թ-ին այն նվազել և կազմել էր 53 տոկոս, իսկ 2010թ-ին այն փոքր-ինչ բարձրացել և կազմել է 55 տոկոս: Այդուհանդերձ, ի տարբերություն նախորդ երկու հետազոտությունների արդյունքում ստացված 20 և 22 տոկոս ցուցանիշների, 2010թ-ին ամուսնացած կանանց շրջանում հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդի օգտագործման ցուցանիշն աճել է և կազմել 27 տոկոս: Մասնավորապես, ինչպես արդեն նշվեց, ամուսնացած կանանց շրջանում աճել է պահպանակ օգտագործողների տեսակարար կշիռը և ի տարբերություն 2000թ-ի 7 և 2005թ-ի 8 տոկոս ցուցանիշների 2010թ-ին այն կազմել է 15 տոկոս: ՀԺԱՀ-2010-ը նաև արձանագրել է հակաբեղմնավորման ավանդական մեթոդների կայուն նվազման միտում (ի տարբերություն 2000թ-ի 37 և 2005թ-ի 34 տոկոս ցուցանիշների, 2010թ-ին այն կազմել է 28 տոկոս), հատկապես ընդհատված սեռական հարաբերության մեթոդը նախընտրողների շրջանում (ի տարբերություն 2000թ-ի 32 և 2005թ-ի 28 տոկոս ցուցանիշների, 2010թ-ին այն կազմել է 25 տոկոս):

96. Կարևորագույն ձեռք բերում է բեղմնականխիչ միջոցների բարձր իմացությունը հարցված կանանց շրջանում.

1) Կանանց 100%-ը գիտեր հակաբեղմնավորման առնվազն մեկ մեթոդ.
2) Ամուսնացած կանանց 27%-ն օգտագործում է հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ, իսկ 28%-ը՝ ավանդական.
3) Ժամանակակից մեթոդների օգտագործման ցուցանիշն աճել է 2005թ-ին գրանցված 20% արդյունքի համեմատ: Այդ աճը մեծապես պայմանավորված է պահպանակի օգտագործման տարածվածությամբ:

Վերջին տարիներին ևս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում հանրապետության Ընտանիքի պլանավորման 77 ծառայություններին ըստ ներկայացված պահանջարկի տրամադրվել են ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցներ:

*Կանանց հիվանդացությունն ու մահացություն*

97. Կանանց հիվանդացությունը և մահացությունը բոլոր խումբ հիվանդություններից (միզասեռական, օնկոլոգիական, սիրտանոթային, ինֆեկցիոն և այլն) ավելի ցածր է, տղամարդկանց համեմատությամբ, համարյա բոլոր տարիքային խմբում:

Չարորակ նորագոյացություններն առաջին անգամ հաստատված ախտորոշումով ըստ սեռատարիքային խմբերի, 2007-2012թթ.

մարդ

| | | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գրանցված հիվանդներ | կին | 211.6 | 211.0 | 222.2 | 219.9 | 231.6 | 248.9 |
| | տղամարդ | 241.5 | 242.9 | 250.8 | 247.3 | 249.8 | 273.1 |

*<u>Հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով առաջին անգամ հաստատված ախտորոշումով ըստ սեռի, 2007-2012թթ.</u>*

100 000 բնակչի հաշվով

| | | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սիֆիլիսի ախտորոշումով գրանցված հիվանդների թվաքանակը | կին | 4.6 | 4.6 | 3.9 | 2.4 | 2.2 | 2.1 |
| | տղամարդ | 5.1 | 4.6 | 4.7 | 3.6 | 3.3 | 3.9 |
| Գոնոկոկային վարակի (գոնորեա) ախտորո-շումով գրանցված հիվանդների թվաքանակը | կին | 11.0 | 8.9 | 8.2 | 4.8 | 4.1 | 6.4 |
| | տղամարդ | 33.7 | 26.8 | 28.5 | 25.9 | 23.8 | 31.3 |

98. Հաշվի առնելով, որ կանանց կյանքի միջին տևողությունը շուրջ 7 տարով գերազանցում է տղամարդկանց կյանքի սպասվող տարիները, և նրանց թվաքանակը տարեցների շրջանում զգալի մեծ է, ապա միայնակ

թոշակառու կանանց համար աղքատության և նրանց առողջության վտանգի ռիսկերը առավել արտահայտված են:

Ըստ էության, թեև կանանց կյանքի միջին տևողությունը ավելի երկար է և նրանց դիմելիությունը բուժհաստատություն ավելի բարձր է (մասամբ նաև վերը նշված գործոններով պայմանավորված), այնուամենայնիվ հիվանդությունների խրոնիզացիայի, հաշմանդամության, ինչպես նաև «կյանքի որակի» անկման տեսանկյունից (մասնավորապես ծերերի մոտ) կանայք շատ ավելի խոցելի են, իսկ ռիսկի շեմը շատ ավելի բարձր է:

*<u>ՄԻԱՎ-ՁԻԱՀ</u>*

99. 2012թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված 1153 ՄԻԱՎ վարակակիրներից կանայք 340 (29,5%) են, 22 (1,9%) երեխաներ, իսկ 138 ՁԻԱՀ հիվանդներից 24-ը կին և 4-ը երեխա, 89 մահացածներից 18 կին և 3 երեխա:

Թեև վերոհիշյալ վիճակագրությունը թվացյալ բարենպաստ է կանանց համար, սակայն առանձնահատուկ է այն հանգամանքը, որ ՄԻԱՎ վարակակիր կանանց գերակշիռ մասը վերարտադրողական ակտիվ տարիքում է, վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով իր ամուսնուց, զուգընկերոջից, պոտենցիալ «ապագա մայրեր» են սերնդարարման մեծ հեռանկարներով: Այս կանանց վարակի պատճառը անուղղակիորեն առնչվում է աղքատության և միգրացիայի հետ: Վարակի աղբյուրը ամուսիններն են, առավել մեծամասնությամբ արտագնա աշխատանքներով զբաղված, որոնք փորձում էին իրենց հանապազօրյա հացը վաստակել ԱՊՀ այլ երկրներում:

*<u>Առողջապահական ծախսեր</u>*

100. Առողջապահական ծախսերի գենդերային վերլուծությունը (կանանց և տղամարդկանց առողջապահական ծրագերի ֆինանսական համամասնությունների համատեքստում) խոսում է ակնհայտ դիսբալանսի մասին ի վնաս տղամարդկանց:

*<u>Հազարամյակի Զարգացման 5–րդ նպատակին հասնելու հնարավորությունների գնահատում</u>*

101. Ինչ վերաբերում է Հազարամյակի Զարգացման 5 –րդ նպատակին «Մայրական առողջության բարելավմանը, ապա կարելի է փաստել, որ դրված նպատակներից շատերը կարելի է ներկա միտումների հիման վրա գնահատվել որպես հասանելի:

| | |
|---|---|
| • Թիրախ 6.A.<br><br>Մինչև 2015թ. 1990թ. Համեմատ 3/4 կրճատել մայրական մահացության մակարդակը | ** *Հավանական հասանելի է*<br><br>*մայրական մահացության ինդեքսը սահմանվել է Հայաստանի համար ոչ ավելի քան 11,2/100000*<br><br>*2009-2011թ. այն կազմել է 15,7/100000*<br><br>*2010, 2011թթ՝ առանձին տարիներին 6,8/1000000* |
| • Թիրախ 6.B.<br><br>Մինչև 2015թ. ապահովել վերարտադրողական առողջապահության համատարած մատչելիություն | Հասանելի է<br><br>✓ նախածննդյան գոնե մեկ այց կատարած հղիների ցուցանիշը 2005թ.համեմատությամբ աճել է 6%-ով և դարձել է 2010թ.99%<br><br>✓ ՆԲԽ- 4 և ավելի այց կազմել է 93%<br><br>✓ իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը դարձել է 99.4%:<br><br>✓ Հղիների 100%-ի ծննդօգնությունը իրականացրել է որակավորված բուժաշխատողը: |

102. Առողջապահական համակարգում զբաղվածության առումով ևս կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքը բացակայում է: Բավական է նշել, որ առ 01.01.2013թ. վիճակագրական տվյալների, համակարգում աշխատող 12922 բժիշկներից 8532(66.1%) իսկ միջին բուժաշխատողներից 99,5% ( 13855-ը 13919-ից) կանայք են: Էապես ավելացել է նաև բժշկական կազմակերպությունների ղեկավարների թվաքանակում կանանց թիվը 753 բժշկական կազմակերպություններից 350(46,5%)-ը ղեկավարվում են առողջապահության կին կազմակերպիչների կողմից:

**Հոդված 13**

103. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը պարունակում է դրույթներ, ուղղված մայրության պաշտպանությանը: Այն վերաբերվում է ընտանեկան նպաստներին, երեխայի խնամքի և երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստներին: Նախորդ պարբերական զեկույցում ներկայացվել է այս ոլորտի պետական քաղաքականությունը: Որոշակի փոփոխություններով (թե՛ ծրագրերի ֆինանսական արժեքների մասով, թե՛ քաղաքականության իմաստով) այն շարունակվում է իրականացվել: Այսպես, ընտանեկան նպաստի չափը, որը դիֆերենցվում է ելնելով ընտանիքի բնակության վայրից, ընտանիքի միավորներից և ընտանիքում բնակվող երեխաների թվից 2007 թվականի համեմատ աճել է մոտավորապես 50%-ով, երեխայի խնամքի համար նախատեսված միանվագ նպաստը աճել է 6 անգամ: Ինչ վերաբերում է երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստին, ապա այստեղ առկա են հետևյալ մոտեցումները. եթե 2007-2009 թվականներին ընտանիքում ծնված երրորդ և հաջորդող յուրաքանչյուր երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող բարձր չափով գումարը տրամադրվել է միայն ընտանեկան նպաստի համակարգում հաշվառվածներին, ապա սկսած 2009 թվականից ընտանիքում ծնված երրորդ և հաջորդող յուարաքանչյուր երեխային տրվող բարձր չափով միանվագ նպաստը տրամադրվում է այդ պայմաններին բավարարող բոլոր երեխաներին: 2013 թվականին առաջին և երկրորդ երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողը ստանում է 50000 դրամ (AMD), սկսած երրորդից – 430 000 դրամ (AMD) յուրաքանչյուր նորածնի համար:

104.2014 թվականի հունվարի 1-ից նախատեսվում է ավելացնել միանվագ նպաստի չափը երեք և ավելին երեխաների ծննդյան կապակցությամբ, մասնավորապես՝ երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում նպաստը կկազմի 500 000 դրամ: Դրան կգումարվի նաև 500 000 դրամ ընտանեկան դրամագլուխ, որը երեխային կտրամադրվի նրա 18 տարին լրանալուն պես: Հինգերորդ երեխայից սկսած 500 000 դրամ միանվագ նպաստին գումարվող ընտանեկան դրամագլուխը կկազմի 1000 000 դրամ:

105.2012 թվականի հուլիսի 26-ին ՀՀ կառավարության N 952-Ն որոշմամբ հաստատվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիրը, որի շրջանակներում գործարկված 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում իրականացվում է սոցիալական դեպքի վարում, որը հիմնված է ընտանիքի (անձի) կարիքների բազմակողմանի գնահատման և դրանց բավարարման ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելուն: Ներկայումս փորձնական ծրագրի աշխատանքներն ընթացքի մեջ են:

106. Բանկային փոխառություններ, անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր և այլ ձևի ֆինանսական վարկեր ստանալու իրավունքից կանայք օգտվում են տղամարդկանց հետ հավասար պայմաններում:

107. Զարգացման քաղաքականության ներկա օրակարգը ենթադրում է տնտեսական աճի ապահովման գործում հասարակության հնարավորինս ընդգրկուն մասնակցության երաշխավորումը կրթական, մասնագիտական պատրաստվածության, տարիքային, այնպես էլ սեռային հատկանիշի տեսակետից: Այս իմաստով սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման տեսակետից կարևորվում է ներառական աճի համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը: Պետք է փաստել, որ վերջին տարիներին տնտեսությանը կանանց մասնակցությունը դինամիկ կերպով ընդլայնվում է, ինչը նաև անհրաժեշտ երաշխիքներ և կայուն հիմքեր է ստեղծում հասարակությունում կանանց և տղամարդկանց աղքատության, եկամուտների ու սպառման մակարդակների միջև խզվածքի կրճատման համար:

Այսպես, օրինակ, համաձայն ազգային պաշտոնական վիճակագրության՝ աղքատության մակարդակի տարբերությունն ըստ սեռի նշանակալի չէ. 2011թ. բնակչության 35% աղքատության մակարդակի պարագայում կանանց և տղամարդկանց աղքատության մակարդակները կազմել են համապատասխանաբար 34.5% և 35.5%, իսկ աղքատ բնակչության մեջ կանանց մասնաբաժինն 8 տոկոսային կետով ցածր է տղամարդկանց մասնաբաժնից: Եթե տղամարդկանց և կանանց մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների միջև խզվածքը 2009 թվականին

եղել է մոտ 2 անգամ, ապա 2011 թվականին այն արդեն 1.7 անգամ է: Դինամիկ առաջընթաց է արձանագրվում նաև զբաղվածության բնագավառում: 2011 թվականին չնայած նախորդ տարվա համեմատ զբաղվածների ընդհանուր թվաքանակի նվազման, զբաղված կանանց թիվն աճել է 23,800 մարդով, ընդ որում՝ տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակների գծով:

Նշված ցուցանիշները վկայում են, որ տնտեսությունում կանանց մասնակցությունը խրախուսող քաղականության միջոցառումներն արդեն իսկ սկսել են դրական արդյունքներով ամրագրվել: Կանանց մասնակցության և զբաղվածության ընդլայնումը հատկապես խրախուսվում է գործարարության զարգացման տարբեր գործիքների ու մեխանիզմների միջոցով: Առկա հնարավորություններից հավասարապես օգտվելու իրավունքի երաշխավորմանն ուղղված՝ տնտեսական քաղաքականությունն արտացոլվում է Հայաստանի Հանրապետության քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրում և դրանից բխող միջոցառումների տարեկան ծրագրում ամրագրված ուղղություններով, ինչպես նաև՝ պետական բյուջեից ֆինանսավորման շրջանակներում փոքր և միջին ձեռնարկատիրությանը (ՓՄՁ) պետական աջակցության տարեկան ծրագրերում:

Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ գործընկերության շրջանակներում ծրագրեր են իրականացվում կանանց ձեռնարկատիրական կարողությունների ընդլայնման, կին գործարարների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման նպատակով: Մասնավորապես, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ կողմից ներկայումս իրականացվում են «Կանանց ձեռներեցության աջակցման զարգացման» վարկային և տեխնիկական աջակցության ծրագրերը: Վերջիններիս շրջանակներում աշխատանքներ են իրականացվում սկսնակ կին ձեռնարկատերերի վերապատրաստման, բիզնեսի զարգացման ծառայությունների ռեսուրսների վերաբերյալ իրազեկման արշավների,

ձեռներեց կանանց համար բիզնես մենթորների ինստիտուտի ձևավորման ու կայացման ուղղություններով, այդ թվում՝ մարզային մակարդակում: Կարևոր ուղղություն է նաև ֆինանսների հասանելիության և մատչելիության ապահովումը, որի շրջանակներում նպատակադրված է մեծացնել կանանց մասնաբաժինը՝ որպես տրամադրվող վարկային երաշխավորությունների և ֆինանսական աջակցության այլ գործիքների շահառու: Ծրագրի շրջանակներում ֆինանսական շուկայի գործընկեր հաստատությունների հետ համագործակցությամբ կապահովվի տեղական արժույթով վարկերի հասանելիությունն այն ձեռնարկությունների համար, որոնց առնվազն 50 տոկոսը կանայք են:

108. ՀՀ-ում մշակվող և իրականացվող պետական քաղաքականությունը սպորտի և երիտասարդական հարցերի ոլորտներում միտված է իրագործելու նշված ոլորտներում ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով ամրագրված պետության հիմնական խնդիրներ: Մասնավորապես և՛ ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 14-ի N 798 որոշմամբ հաստատված «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգում», և՛ ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի N 1693–Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունում և միջոցառումների ծրագրում» մեծապես կարևորված են երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցությունը, երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում, երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և հայրենասիրական դաստիարակություն, կրթության շարունակականություն և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը, և նշված ուղղություններով իրականացվում են և նախատեսված են բազմաթիվ միջոցառումներ:

109. 2011 թվականից գործում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակված և ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 29-ի № 98-Ն որոշմամբ հաստատված «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի նպատակն է պետական աջակցություն ցուցաբերել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին:

Ծրագրով նախատեսվում է բնակարան ձեռք բերելու հարցում պետական օժանդակության ցուցաբերում երիտասարդ ընտանիքներին՝ շուկայականից ցածր տոկոսադրույքներով (Երևան քաղաքում՝ 8.5-9 %, մարզերում՝ 6.5-7 %), հիպոտեկային վարկավորման միջոցով:

Ծրագրի շրջանակներում բանկերը և վարկային կազմակերպությունները երիտասարդ ընտանիքներին տրամադրում են վարկեր՝ բնակարան ձեռք բերելու նպատակով, իսկ պետությունը վարկի մարման գործընթացում ֆինանսական աջակցություն է ցուցաբերում վարկառուին:

Պետության ֆինանսական օգնությունն արտացոլվում է տոկոսագումարների ուղղակի և անուղղակի ձևով մասնակի սուբսիդավորման մեջ: Ընդհանուր առմամբ երիտասարդ ընտանիքին պետությունն աջակցում է մոտ 4 տոկոսային կետով:

---

110. Մշակույթի բնագավառում կանանց համար ապահովվում են հավասար հնարավորություններ դրսևորելու ստեղծագործական ներուժը և օգտագործելու իրենց ունակությունները:
Մշակութային հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը նպատակաուղղված է կանանց և տղամարդկանց համար մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, սեփական ստեղծագործության բարիքներից օգտվելու, մշակութային արժեքներին ազատորեն հաղորդակցվելու հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը:
Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության մեջ մշակույթի ոլորտը ներկայացված է Հայաստանի Հանրապետության

գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումներով, «Գենդերային քաղաքականության մասին» հայեցակարգի կետերով, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով:
Խոցելի խմբերին վերաբերող վիճակագրական տեղեկատվությունը, մասնավորապես, աղքատության ցուցանիշներն ըստ սեռի և տարիքային խմբերի, տնտեսության, զբաղվածության, գործազրկության մասին տեղեկատվությունը, ինչպես նաև զբաղվածների նկարագիրը ըստ զբաղվածության, ըստ աշխատանքային բնույթի և այլն տրվում է զեկույցին կից ներկայացվող առդիրում:

<u>Հոդված 14</u>

111.2012 թվականին հանրապետության ընդամենը կին զբաղվածների մեջ 57.1%-ը գյուղատնտեսության ոլորտում զբաղված կանայք են:
2012 թվականի տվյալներով գյուղական բնակավայրերում կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները կազմում են շուրջ 26%, իսկ տղամարդկանց գլխավորությամբ՝ 74%:

*) Աղբյուրը՝ ԱՎԾ, Կանայք և տղամարդիկ, 2013:

112. ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման համաձայն հանրապետությունում 2011 թվականից իրականացվում է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Ընդհանուր առմամբ, սկսած 2011 թվականի ապրիլի 1-ից, 2013 թվականի հունիսի 30-ի դրությամբ տրամադրվել է 53.8 հազար միավոր վարկ շուրջ 44.1 մլրդ դրամ գումարով: Նշված թվից շուրջ 15 տոկոսը բաժին է ընկնում կանանց:

Արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը կխթանի կանանց ձեռնարկատիրական գործունեության իրականացմանը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, եկամուտների ավելացմանը, աղքատության նվազեցմանը և ի վերջո կհանգեցնի գյուղի կանանց ակտիվության բարձրացմանն ու կենսապայմանների բարելավմանը:

113. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և

մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 67 համայնքում հիմնադրվել են <<Համայնքի արոտօգտագործողների միավորում>> սպառողական կոոպերատիվներ: Նշված կոոպերատիվների անդամ է հանդիսանում 6674 մարդ, որից 1568-ը կանայք: 104 կին հանդիսանում է կոոպերատիվների վարչությունների անդամ: Կոոպերատիվների կին անդամների համար իրականացվել է ուսուցման դասընթացներ՝ կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների, կոոպերատիվի բյուջեի կազմման, արոտօգտագործման, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման, դեգրադացիայի դեմ պայքարի, արոտների բարելավման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ներկայացման և այլ թեմաներով:

